№ 3—4 (211) XX ՏԱՐԻ ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՄԻ ՄԵԾ ՇԱՐԺՄԱՆ ՍՏԻԵՐՆԵՐԸ

(ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՎԻԺՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

II

„Ժողովրդից" յետոյ—պրոլետարիատ...

Իդէալիզացիան, դասակարգային գաղափարականացումը շարունակուեց, աւելի յախուռն, աւելի անզուսպ։ Գործաւորների փոքրաթիւ դասը օժտուեց նոյն վիթխարի յատկութիւններով, նոյն միստիքական հմայքով, ինչպէս երբեմն „Ժողովուրդը"։ Եւ ամեն ինչ այնուհետև շրջան արեց պրոլետարիատ-առանցքի շուրջը։ Բոլոր յոյսերը կենտրոնացան նրա վրայ, միմիայն նրա վրայ։

Արդէն 1883-ին, իր անդրանիկ սոցիալ-դեմոկրատական բրոշիւրի մէջ—„Սոցիալիզմ և քաղաքական կռիւ"—ռուսաց մարքսիզմի պարագլուխը, Գեօրգի Պլեխանով, այն միտքն էր արծարծում, թէ՝

Բռնակալութեան դէմ յայտարարած կռիւը կարող է յաղթել միմիայն մէկ էական պայմանով՝ որ այդ կռիւը դառնայ դասակարգային ինքնաճանաչութեան հասած պրոլետարիատի շարժում։

Մարքսիզմի տիրապետութեամբ՝ Ռուսաստանում կատարուեց մի այլ շրջում մտքերի մէջ։ Նոր հոսանքը սարսափով երես դարձրեց և կուի այն մեթոդից, որ կազմել էր նախորդ հոսանքի—„Նարոդնայա Վոլիա"-ի տիեզերական հռչակը։

Ռուսաստանը իր լայնածաւալ փէշերի տակ առանց այն էլ շատ քիչ ունէր բուն, գործօն, յեղափոխական կարողութիւն — նոր տիպի գործիչները հրաժարիմք ասացին և դաւադրական գործունէութեան այն բոլոր արիւնոտ, յարձակողական ձեռնարկներին, առանց որոնց, տարաբախտաբար, չի կատարուել ազգերի յեղափոխութիւնը։

Հաւատը դէպի շարժման տարերայնութիւնը դեռ վառ էր նաև այդ սերնդի մէջ։ Աւելի ևս։ „Տարերայնութիւնը", այսպէս ասած, կրկնապատկուում էր։ Մարքսիզմը իր „տնտեսական մատերիալիզմի" երկաթէ օրէնքներով, օբ'եկտիվիզմի, առարկայականութեան իր տարամերժ դաւանանքով գալիս էր ուժեղացնելու տարերայնութեան ու „ճակատագրականութեան" վաղեմի հաւատը ռուս մտաւորականութեան մի խոշոր հատուածի մէջ։

Մարքսեան այդ երկաթէ դէտերմինիզմի ծոցում առհասարակ շատ քիչ տեղ է տրուում զուտ սուբ'եկտիվ, ենթակայական գործօնին, այսինքն մարդ-ազգակներին, նրանց կամքին, ձեռներէցութեան ևն։ Այդ նոյն դէտերմինիզմի հաւատամքը Ռուսաստան փոխադրելով, թուլացրեց Լավրովների ու Միխայլովսկիների հռչակած սուբ'եկտիվիզմը, մի թէօրիա, որ միշտ ներքուզել ու քաջալերել է մարդ-ազգակի, որպէս գիտակից էակի, խոշոր դերը պատմական վերիվայրումների մէջ, հանդէպ օբ'եկտիվ, առարկայական գործօնների, հանդէպ պատմական „տարերային" պրոցէսի։ Անհատը սոսկ ծառայ չէ, սոսկ հնազանդ սպասաւոր չէ „տարերային", „ճակատագրական" պրոցէսների, այլ և յաճախ տէր, հրամանատար։ Անհատները, գործօն ու կամքոտ խմբումները, յեղափոխական խիզախ, անվեհեր փոքրամասնութիւնները — ինչպէս յաճախ վկայում է ինքը պատմութիւնը—կարող են յղանալ և իրագործել հսկայական ծրագիրներ, կարող են ստեղծել նորանոր պահանջներ ստրուկ ու խաւար ժողովուրդների մէջ, կարող են պատուել „ճակատագրական" անցքերի շրջթան, քաշել իրենց ետքից զանգուածները, յեղաշրջել ու վերակազմել ամբողջ երկիրներ...

Օբ'եկտիվ տնտեսական ու այլ գործօնների կարևորութիւնը ահագին է պատմական պրոցէսի աստիճանական զարգացման, անցքերի նախապատրաստութեան մէջ, բայց գիտակից մարդ-անհատն ևս իր հակազդող ու հրահրող, ստեղծագործող դերն ունի, որ պէտք է յար և միշտ արծարծել, մանաւանդ խաւար ու յետամնաց միջավայրերում, վերանորոգման բարդ աշխատանքի համար կոչուած երիտասարդութեան մէջ։

Այդ դաւանանքն էր, որ այնքան ուժգին թափ էր հաղորդում „Նարոդնայա-Վոլիա"-ի հերոսներին և նիւթում էր նրանց բազուկներով աշխարհաշառաչ սխրագործութիւններ...

Դրա հակառակ՝ ռուս մարքսիստական սոցիալ-դեմոկրատիան սկսեց արծարծել մարքսեան դոգմը պատմութեան երկաթէ, տարերային պրոցէսի մասին, ուր

համարեա ջնջուում է սուբ՝եկտիվ, գիտակցական գործօնի դերը... Մի դօգմ, որ տարածուելով աւելի ևս բարացած ձևով ռուսական իրականութեան մէջ, չէր կարող չ՝անդրադառնալ աճող սերնդի հոգեբանութեան վրայ, չը թուլացնել առանց այն էլ խիստ սահմանափակ նախաձեռնութեան ոգին, յեղափոխական, դիմադրական կորովը, „մեծ գործերի“ ախորժակները...

Ո՛չ մի ճակատամարտ բռնակալութեան դէմ. հեռո՛ւ տերրօրը, հեռո՛ւ խօլ ու արիւնոտ բաղխումները։ Բռնակալութիւնը ինքն իրեն կը տապալուի... Նրան կը տապալէ կապիտալիստական զարգացման պրօցէսը, որ առաջ է գնում տարերային ճակատագրականութեամբ, արտադրելով ամեն օր կապիտալիզմի ու բռնակալութեան „գերեզմանափոր-պրօլետարիատին“...

Ռուսաստանը կապիտալիստական պետութիւն է. իսկ Մարքսը ասել է, որ կապիտալիստական կազմը ամենուրեք մղում է տարերայնօրէն դէպի կործանման անդունդը, շնորհիւ „ներքին յարակայ հակասութիւնների“ և որ նրա փլատակների վրայ պիտի կառուցուի սօցիալիստական իրաւակարգը, որ նոյնպէս տարերայնօրէն նախապատրաստուում է արդէն կապիտալիստական հասարակութեան արգանդում...

Պէտք է կազմակերպել „գերեզմանափորներին“, մղել շարունակ պրօպագանդ ու ագիտացիա, հրել շարունակ դէպի դասակարգային ինքնաճանաչութիւն։

Պրօլետարիատը — միակ ու գերազանցապէս յեղափոխական դասակարգը։ Պրօլետարիատը—միակ կրողը սօցիալիզմի վեհ գաղափարի։ Ամեն ինչ պրօլետարիատի համար և պրօլետարիատի միջոցով...

Եւ ամեն ինչ — խաղաղ, աստիճանական էւօլիւցիայի ճանապարհով։ Գործադուլը — կռուի գերագոյն միջոցը։ Մարքսն էլ հէնց ասել է. „իւրաքանչիւր դասակարգային կռիւ—քաղաքական կռիւ է“...

Ահաւասիկ նոր բարձրացող հոսանքի բովանդակ ֆրազէօլօգիան։ Ահա մեթօդը և գործելակերպը այն կուսակցութեան—ռուսական մարքսիստ սօցիալ-դեմօկրատիայի — որ իննսունական թուականներում տիրեց հրապարակին, ստանձնելով շարժման ամբողջ պատասխանատուութիւնը, յաւակնելով վարել ահագին կայսրութեան ճակատագիրը... 10—15 տարուայ մեռելային շրջանից յետոյ։

„Նարօդնայա-Վօլիա“-ի վսեմ ժեստերը, ծեղեաբօմբերի ու Պերօվսկայաների գոռ ու ահեղ շեփորումները փոխարկուեցին մանր ու խաղաղ, օրինական կամ կէս-օրինական մարզանքների։ Դա „աստիճանականութեան“ և մանր „կուլտուրականութեան“ ջատագովումն էր, որ դէմ էր գնում „ստորերկրեայ“, ոչ-օրինական, բուն յեղափոխական գործունէութեան և որ գալիս էր, տարաբախտաբար, աւելի ևս ուժ տալու մտաւորականութեան մասսաների քաղաքական ապատիային (apathie), անտարբերութեան։ Ասես յետ էր խաղում պատմութեան և յեղափոխութեան անիւը... Ասես այն երկիրը չէր, որ դեռ 60—70 տարի առաջ տեսել էր „Դէկաբրիստների“ ապստամբութիւնը։

Իդէալները մանրանում են պրօլետարական այդ խանդավառ կռապաշտութեան մէջ։ Մարքսիզմը դառնում է հոմանիշ քաղաքական ինդիֆֆերենտիզմի, կրաւորականութեան։

Զուր չէին անհանգիստ հաւա՞ր կոչում նոր հոսանքի դէմ ռուսական մտքի տաղանդաւոր ներկայացուցիչները, դեռ 90-ական թուերի սկզբից։ Զուր չէր „նարօդովոլցիների“ մեծանուն պարագլուխը, Նիկօլայ Միխայլօվսկի, այնքան մոլեգնութեամբ արշաւում մարքսիզմի ռուս անշնորհք աշակերտների, նրանց մեթօդի ու տակտիկի դէմ։ Եւ ի զուր Բելտօվները ու ուխտադրուժ Ստրուվէները—երբեմն „անհաշտ“ յեղափոխական (գէթ խօսքով), իսկ այսօր խոհեմ օպպօրտունիստներ—աղաղակում էին այդ շեշտակի քննադատութիւնների հանդէպ, ծանուցանելով իրենց գործի ու դաւանանքի գերազանցապէս յեղափոխական բնոյթը... Պարզ էր բոլոր անաչառ դիտողների համար, որ նոր տիպի յեղափոխականները, ի տեղի լրացնելու և լայնացնելու նախորդ յեղափոխական կուսակցութիւնների գործելակերպը, ի տեղի մարզելու ինտելիգենտերիտասարդութիւնն ու ժողովրդային զանգուածները բուն քաղաքական-յեղափոխական դպրոցի մէջ, վարժեցրին նրանց... տօլստոյական կրաւորական դիմադրութեանը։

Լեւ Տօլստոյին այդ աննման դօգմապաշտները քարկոծեցին տասնեակ տարիների ընթացքում, հեգնեցին, արհամարհեցին, „ոչնչացրին“... մարքսիստական սերտած ֆօրմուլներով. և, սակայն, իրենց քարոզած կրաւորական դիմադրութեան պրօպագանդով շատ էլ հեռու չէին Տօլստոյից և անգիտակցաբար խրախուսում էին նրա հռչակաւոր պատգամը։ „չարին չարով մի՛ դիմադրիր“։

Հալածա՞նք „տերրօրի“ դէմ. բնազդական գարշանք ու ատելութիւն դէպի այն բոլորը, ինչ որևէ առնչութիւն ունի զէնքի, ռումբի, վառօդի հետ.—այսպէս է ճշմարիտ խարակտերիստիկը, յատկանշումը Պլեխանովների ու նրանց կրաւորական վաշտերի հոգեբանութեան։ Այդ վաշտերով էին ուզում յաղթահարել վիթխարի, ճիրանաւոր Գազանին, որ իր մահաբոյր, արճիճային հպումով խեղդամահ էր անում ազատ կեանքի, նոյնիսկ օրինական, կուլտուրական գործունէութեան ամենահամեստ արտայայտութիւնները...

Իրօք Գազանը հանգիստ էր թողնում։ Քաղաքական ազատութեան խնդիրը, ինչպէս ասացինք, նսեմա-

նում էր սոցիալական մտահոգութիւնների առջև։ Սոցիալիզմը և տնտեսական լոզունգները անհամեմատ աւելի էին հետաքրքրում ռուսական նէօ-մարքսիստներին, քան Սահմանադրութիւնը։ Սոցիալիզմը՝ իսկական մեծ Ն պ ա տ ա կ Ն էր, մնացածը—երկրորդական նպատակներ էին, կամ սոսկ միջոցներ։

Թո՛ղ գազանը որոճայ։ Թող Նա ճարակէ, խեղդէ, յօշոտէ։ Փոյթ չէ. կապիտալիզմի տարերային պրոցէսը, ամեն ինչ կը հոգայ։ Պրոլետարիատը կը փորէ նրա գերեզմանը։

Ի Ն Չ պ է՞ ս...

Այդ հարցն արդէն սկսել էր ջղայնացնել ռուս հասարակութիւնը 900-ական թուերի սկզբում, 6—7 տարի սրանից առաջ։ Մթնոլորտը բաւականաչափ եղեբարականացել էր՝ մի կողմից ուսանողական շարժումներով, միւս կողմից սոցիալիստ-յեղափոխականների վարած մի շարք դաւադրութիւններով, որոնց հետևանքն էր երկու յետադէմ մինիստրների — Բոգոլէպովի և Սիպիագինի—սպանումը։ Բնորոշ է, որ նոյնիսկ 900-ական թուերի սկզբներում, երբ մարքսիստական սոցիալ-դեմոկրատիան բաւական արդէն առաջ էր տարել „դասակարգային ինքնագիտակցութեան“ ու „կազմակերպումի“ իր գործը—դարձեալ նա չէր, որ հնչեցրեց կռուի շեփորը, այլ ուրիշ ուժեր, այն է՝ 1. ապադասակարգային ուսանողութիւնը, որ վաղուց ի վեր յեղափոխական շարժումների առաջապահ է եղել և 2. սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը, որ նոր-նոր հրապարակ էր գալիս „Նարոդնայա-Վոլիա“-ի վերանորոգած դրօշակով, տերրորի ու ապստամբութեան նշանաբաններով, որ, սակայն, չը կարողացաւ, տարաբախտաբար, բաւականաչափ աճել ու ծաւալուել ռուսական միջավայրում։

Ինչպէ՞ս պիտի վարէր պրոլետարիատը „գերեզմանափորի“ իր պաշտօնը, — հարցնում էր այն տենդոտ օրերում ռուս ջղայնացած հասարակութիւնը և ամբողջ աշխարհը։ Ի՞նչ ձևով արդեօք պիտի գլորուէր, վերջապէս, այն ահագին ու բարբարոս ուժը, որ ծանր տապանաքարի պէս ընկած էր հարիւր միլիօնաւոր ազգաբնակութեան կրծքին...

Եւ ահա Ռուսաստանի „ամենամեծ“ կուսակցութիւնը, „միակ ու գերազանցապէս յեղափոխական պրոլետարիատի կուսակցութիւնը“, պատասխանում է իր առաջնորդ Պլեխանովի գրչով, արտասահմանեան „Զարիա“ հանդէսի (№ 2—3) մի յօդուածի մէջ. „Յետո՞ ինչ“։ Մարքսիստական ֆորմուլների անխոնջ հոլովողն զգում է, որ ժամանակը հասել է, վերջապէս, դիմելու փոքր ինչ աւելի կորովի ու գործօն քաղաքականութեան,—մանաւանդ որ հակառակորդ կուսակցութիւնը իր շատ համեստ ուժերով սկսում էր արդէն դափիներ նուաճել քաղաքական կռուի ասպարէզում։

„Պէտք է շարունակել, ասում է նա, սկսուած ազատագրական շարժումը։ Իսկ դրա համար պէտք է՝

1. Կազմակերպուել։

2. Հեռք առնել մեզնից կախուած բոլոր միջոցները՝ պարզելու համար հասարակութեան դիմադրական տարրերին մեր հետապնդած մերձաւոր քաղաքական պարտաւորութիւնները։

3) Շարունակել քաղաքական ագիտացիան աշխատաւոր զանգուածի մէջ։

4. Տալ այդ ագիտացիային աւելի լայն չափեր։

5. Տալ այդ ագիտացիային էլ աւելի լայն չափեր։

6. Նոյնը—աւելի մեծ չափով։

7. Նոյնը—էլ աւելի մեծ չափով։

8. Նոյնը—ամենամեծ չափով։

9. Իսկ յետո՞յ... բայց այդ մասին մենք դեռ յետոյ կը զրուցենք, դեռ ժամանակ կայ“։

Ահա անբուժելի սրախօսելացաւով բռնուած „վարպետի“ բնորոշ յայտարարութիւնը մի ահաւոր, տագնապալի շրջանում, երբ բռնապետական Մողոքը կրկնապատկում ու եռապատկում էր իր հարուածները, լափում էր երկրի, ժողովրդի լաւագոյն զաւակներին, երբ սիբիրեան տունդրաները լցւում էին քաղաքական աքսորեալներով և երբ աւետաբեր մ ր ր կ ա հ ա ւ ը սլանում էր արդէն կիսախարխուլ կայսրութեան վրայից, ազդարարելով յեղափոխական փոթորիկների մօտալուտ արշաւը...

Կազմակերպուե՛լ, կազմակերպուե՛լ, կազմակերպուե՛լ։ Պրոպագա՞նդ, ագիտացիա, դասակարգային գիտակցութի՛ւն, դասակարգային կռի՛ւ, տնտեսական մատերիալի՛զմ, կապիտալիզմի տարերային առաջխաղացութի՛ւն, ճակատագրական ինքնաջնջում, պրոլետարիատի դիկտատուրա՞...

Ցայտնի չէ, թէ մինչև երբ ռուսական հրապարակը պիտի թնդար ճռռում ու սին ֆրազէօլոգիայի այդ անհատնում տարափներից, յայտնի չէ, թէ դեռ քանի տասնեակ տարիներ Ռուսաստանը պիտի դեգերէր անշարժութեան ճահճի մէջ և նրա ամենամեծ, „պատասխանատու“ կուսակցութիւնը պաղ, անխռով, համբերատար լաւատեսութեամբ պիտի որոճար իր կրաւորական լոզունգները, յայտնի չէ, թէ մինչև երբ պիտի տևէր այդ բոլոր անարգանքն ու անախրոնիզմը,—եթէ յանկարծ չ'որոտային եապօնական թնդանօթները և եթէ նրա հետ չ'որոտար նաև Սազոնովի ռումբը, որ վերցրեց ճանապարհից ահեղ ու ամենակարող դիկտատոր՝ Պլեվէին։

Պատերազմը պայթեց, որպէս մի տեսակ աստուածառաք անակնկալ և սասանեցրեց Կոլօսի հիմքերը։ Սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը սատար եղաւ պատերազմի յեղափոխական աշխատանքին։ Բաչմաշեովներին ու Սազոնովներին յաջորդեցին Կալեայէվները, մին-միւսի ետևից արիւնաշաղաղ գետին փուեցին բրու-

նապետական կենտրոնի սիւները։ Ռուսաստանը „յեղափոխականացաւ“... Բռնակալութիւնը երբէք չէր տեսել մի այդպիսի տագնապ։

Այն ժամանակ միայն բեմ նետուեց, վերջապէս, գուրգուրած կուռքը—դասակարգային գիտակցութեան հասած Պրոլետարիատը—բեմ նետուեց գըլխաւորապէս—ոչ բացառապէս—մարքսիստների ձեռքով։

Արդարև,—սքանչելի մի ուժ. ճիւղաւորուած, ներդաշնակ, միաբան ու կարգապահ։ Աշխարհը տեսաւ „ընդհանուր գործադուլի“ և պրոլետարական համերաշխութեան մի եզակի ու հրահանգիչ փորձ։ Սակայն—այդտեղ է ողբերգական ֆինալի պատճառը—պրոլետարական այդ գեղեցիկ զօրաշարժի մէջ պակասում էր յեղափոխութեան բուն գործօն, „հրեղէն նիւթը“... „Կուռքը“ հրապարակ էր իջնում երկրի ամենատագնապոտ և ամենավճռական մարտի ժամին, որպէս անզէն ու անվարժ, կրաւորական մի տարերք, որպէս հսկայ ու իներտ մի զանգուած, որ միայն մերկ կուրծքեր ունէր ընդդիմադրելու սուինների անտառներին։

Եւ յաղթանակը կարճատև եղաւ։ Բռնակալութիւնը, սարսափի ու շփոթութեան գերագոյն վայրկեանին, հրատարակեց հոկտեմբերեան մեծախոստում մանիֆէստը, բայց և շուտով, շատ շուտով, ծռեց անիւը դէպի յետ, դէպի Պլէվէ ու Պոբէդոնոսցեվ, որովհետև նա զգաց, տեսաւ փորձով, որ „մեծ, տիրական կուսակցութիւնը“ ամենևին չէր հոգացել իր զանգուածների զուտ մարտական դաստիարակութեան մասին, տեսաւ, համոզուեց, որ Ռուսաստանի ռազմա-յեղափոխական ուժերի պաշարը այնքան էլ սարսափելի չէ և որ պրոլետարիատ-վիթխարին իրօք մի փառահեղ „թնդանօթամիս“ է, ֆրանսիական արտայայտութեամբ՝ *de la chair à canon*։

Զ'օգնեց, ի վերջոյ, ոչ ահռելի պատերազմը, որ ստեղծել էր ինքնակալ ռէժիմի համար աներևակայելի մի ճգնաժամ, ոչ ցիրուցան, սահմանափակ զինուորական ու այլ խմբային բռնկումները, որոնք յուսահատութեան օրհասական թափերի մէջ մերկացնում էին յեղափոխական բանակի ներքին տկարութիւնը, ոչ էլ ընդհանուր գործադուլը (1905 թ.), „մերկ կուրծքերի ու կրաւորական դիմադրութեան“ իր հաւատամքով։ Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը ճարճատեց, ընկաւ „հոգեվարք“ անուանուած բռնակալութեան գրոհի տակ, ռէակցիան նորէն յաղթանակեց և „պրոլետարիատ-տիտանը“, որ մի վայրկեան տեսաւ ինքզինքը երկրի տէր, որ մի վայրկեան հեղեղեց իր մարքսիստ երկրպագուների սրտերը սրբազնագոյն պաշտամունքի բոցավառ կրակով—„պրոլետարիատ-տիտանը“ ցաւագինօրէն կորացրեց մէջքը, համակերպեց...

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՅՈՒՇԵՐ ԱՐԻՒՆՈՑ ՕՐԵՐԻՑ *)

(ԻՄ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ)

Անդրկովկասում, նահանգական Գանձակ քաղաքից եօթ վերստ հեռաւորութեան վրայ, փոքր Կովկասի ճիւղաւորութիւններին մօտ ընկած է գերմանական գաղութ Ելէնէնդորֆը։

Այդ գաղութում ես ապրում էի սկսած 1888 թուից։ Ես առողջ չէի և բնակութեանս համար այդ հատուստ անկիւնն ընտրեցի, ի նկատի առնելով նրա կլիմայական պայմանները։

Ես այդ գաղութում ունէի դեղարան, արհեստական հանքային ջրերի գործարան, իսկ շրջականերում մարգանէցի հանքեր։ Այս արդիւնագործութիւններով ես պարապում էի միայն ընտանիքիս ապրուստի համար. իմ սիրած աշխատանքը գրականութիւնն էր։ Ես գրում էի մայրենի, հայ լեզուով։

Նոյն 1888 թուից այդ գաղութում ապրում էր գեներալ Զասի առաջին Լաբինսկի կազակային գունդը։

Մինչև հայ-թրքական ընդհարումները ես մեծ յարգանք էի վայելում գաղթականների մէջ, իսկ գնդի բժիշկների և սպաների շրջանում ես ունէի շատ բարեկամներ և լաւ ծանօթներ։ Երբ ռուս կառավարութիւնը հայերի դէմ թշնամութիւն և հալածանք գրգռեց, գաղթականների և կազակների վերաբերումը դէպի ինձ միանգամից փոխուեց և նրանք սկսեցին ինձ վրայ կասկածել, իբր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պարագլուխներից մէկը։ Կարճ ժամանակի ընթացքում երկու անգամ խուզարկութիւն կատարեցին տանս և դեղատանիս մէջ, բայց անհետևանք։ Զեռագիրներիցս մի քանիսը տարան այդ խուզարկութիւնների ժամանակ և երբէք էլ չվերադարձրին։

1907 թ. օգոստոսի կէսերին Ելէնէնդորֆում, երեկոյեան դէմ, իր դռների առաջ սպանուեց գաղթական (կոլոնիստ) Գ ո ւ ր ր։ Շատերը տեսել էին մարդասպաններին՝ փախչելիս Գանձակ քաղաքի ուղղութեամբ։ Պատմածներին նայելով երկու հոգի են եղել. մէկը բարձրահասակ և նիհար, միւսը միջահասակ և հաստ։

Լաբինսկի գնդի հրամանատար Շչերբինայի կարգադրութեան համաձայն իսկոյն ուղարկուում են մի խումբ կազակներ հետևելու մարդասպաններին։ Շուտով հասնում են սրանց գաղթականների այգիներին մօտ։ Սակայն մարդասպանները կրակ են արձակում, շփոթութիւն գցում կազակների մէջ, ծանր վիրաւորում երեքին և իսկոյն թաքնուում այգիներում։ Վիրաւորուածներին տանում են Գանձակի զինուորական հիւանդանոցը, որտեղ նրանցից մէկը, Ե ա խ ն ս, մեռնում է։

Գուրրի սպանութիւնից անմիջապէս յետոյ տեղական ամրողջ ադմինիստրասիոնը, դատախազը և քննիչը եռանդուն կերպով կպչում են գործին՝ որոշելով անպատճառ գտնել մարդասպաններին և ամենախիստ կերպով պատժել։

Բանտարկուում են շատ հայեր, իհարկէ, բոլորովին անմեղ մարդիկ։ Անկարող լինելով ձերբակալել մարդասպաններին՝ տեղական ադմինիստրասիոնը՝ գեներալ-նահանգապետի գլխաւորութեամբ, որոշում է վրէժ առնել Գանձակի հայերից. իսկ Դաշնակցութեան մէջ կասկածող անձերին սրսալ կամ՝ սպանել։

Ելէնէնդորֆի գերմանացիք դէպքից օգուտ՝ մատնում են ինձ, իբրև մէկը Դաշնակցութեան գլխաւորներից։ Իսկ սպանուած Գուրրի կինը չէ վարանում ներկայացնել ինձ, իբր նրա ամուսնու ոճրագործը։

Դատախազը և քննիչը ինձ պատասխանատուութեան կանչելու ոչ մէկ հիմք չգտնելով՝ հանգիստ են թողնում

---

*) Հեղինակը լինելով միանգամայն չէզոք անձնաւորութիւն՝ այդ նանգամանքը աւելի եւս ուժ է տալիս ներկայ տխուր փաստագրին, որ ներկայացնում է մի ուշագրաւ նմուշ մեր կոզակային ռէժիմի եւ բարքերի։

Այդ ժամանակ ինձ սկսում է հետաքրքրել ստիկանութիւնը։ Գանձակի նախկին գաւառապետ (Նաչալնիկ) Աւալիանին, յայտնի հայակերը, որոշում է ամեն կերպ արգելք դնել իմ կայքերի վրայ, զրկել ինձ դեղարան ունենալու իրաւունքից և վերապահել այն գաղթականներին։

Ես տեղեկացայ հաւատարիմ աղբիւրներից, որ Աւալիանին հաւաքել է գաղութի գլխաւորներին, խորհրդի հրաւիրել Լաբինսկի գնդի մէկ քանի սպաներին։ Իմացայ, որ այդ ժողովը քննութեան է առել իմ անձնաւորութիւնը և միաձայն որոշել՝ բանտարկել վարչական ճանապարհով, կազակների հետ ուղարկել Գանձակի բանտը, հրահանգել կազակներին սպանել ինձ ճանապարհին և ասել, որ իբր թէ ես ուզում էի փախչել և սպանուեցի։

Օրը հասաւ կազակ Եախնօի և կոլօնիստ Գուրրի յուղարկաւորութեան։ Եախնօի մարմինը Գանձակից բերել էին Եկէնէնդօրֆ գաղութը, Լաբինսկի գնդի եկեղեցին։

Ես նստած էի սենեակումս և լրագիր էի կարդում։ Իմ օգնականը աշխատում էր դեղարանում։ Կնոջս և երեխաներս ժամանակին ուղարկել էի Գանձակ, ազգականներս մօտ, որպէսզի բռնութեան զոհ չդառնային կազակների կողմից, որոնք քանի անգամ փորձել էին ներս խուժել դեղատունս, բայց ես չլսած ձևանալով չէի բացել դռները։

Գաղութի եկեղեցու զանգակները սկսեցին զօղանջել. դուրս էին բերում Գուրրի մարմինը։ Ցանկարծ ինձ մօտ վազեց հանքային գործի իմ ընկերը, տեխնիկ Ֆերդինանդ Լաստ և ասաց.

— Ձեր կեանքը վտանգի մէջ է. շուտով պատրաստուեցէք գնանք ինձ մօտ։

— Ի՞նչ կայ, հարցրի ես։

Նա պատմեց, թէ ինքը հեռախօսով իմացել է, որ Գանձակում, կազակ Եախնօի յուղարկաւորութեան միջոցին ընդհարում է պատահել հայերի և կազակների միջև և որ վիրաւորուած ու սպանուած են շատ հայեր։ Յետոյ նա աւելացրեց.

— Ըստ երևոյթին ձեզ համարում են Դաշնակցական կուսակցութեան պարագլուխներից մէնը և լուրեր են պատում, որ դուք պիտի սպանուէք այսօր իսկ, երբ տեղս հանի կազակի թաղման հանդէսը։

Ես չէի կամենում հաւատալ այդ բոլորին, որովհետև խիղճս հանգիստ էր Գուրրի սպանութեան գործում և բացի այդ՝ ես չէի պատկանում Ռուսաստանում կամ Կովկասում գոյութիւն ունեցող որևէ կուսակցութեան, դերադասելով անկախ լինել և անկախ աշխատել գրական ասպարէզում։ Եւ ինձ թւում էր, որ ես կը կարողանայի ապացուցել օրէնքի առաջ իմ անմեղութիւնը, կը վերականգնէի ամբողջ ճշմարտութիւնը և կ'ազատուէի այն բռնի մահից, որի մասին ասել էր ընկերս։

Բայց, աւա՜ղ, կարելի՞ է արդեօք օրէնք և օրինաւորութիւն որոնել այնտեղ, ուր թագաւորում է բռնակալութիւնը։

Կազակ Եախնօի թաղման հանդէսը մօտենում էր գաղութին։ Բոլորն թանգ էր և ընկերս թախանձանքով խնդրում էր ինձ երկար չմնալ և գնալ իր մօտ։

Շուտով կառք նստեցինք և գնացինք իր հետ։

Կազակի թաղումից յետոյ, նոյն օրը երեկոյեան վազեց մօտս իմ օգնականը, վախեցած, արցունքը աչքերին և յայտնեց ինձ, որ չի կարող մնալ դեղարանում, որովհետև մի խումբ զինուած կազակներ չեն հեռանում դեղարանից, մի ուրիշ խումբ նստած է դեղարանի դիմաց, գերմանացու պաշտպանում։ Ցանտէր գերմանացին հիւրասիրում է նրանց գինիով և ուտելիքով՝ համոզելով կոտորել գաղութում ապրող բոլոր հայերին։

Կազակները երկար սպասել էին ինձ. ես չէի վերադարձել. նրանք վերջապէս հեռացել էին։

Ծանր գիշեր անցկացրի ես պարոն Լաստի մօտ։ Հնար չեղաւ դուրս գալ գաղութից, որովհետև փողոցներում կազակների և գերմանացիների պահնորդական խմբեր էին պտտում՝ աշխատելով ինչպէս լինի որսալ ինձ և սպանել։

Հետևեալ օրը, ճաշից յետոյ, մօտս եկաւ հանքային գործի մի ուրիշ ընկեր, Ռ օ զ է ն դ օ ր ֆ, որ ապրում էր նոյն տանը, ուր Լաստն էր և հանդիսացրեց ինձ ասելով, որ կազակները արդէն խաղաղել են, կրքերը իջել և եթէ ես կամենում եմ՝ կարող եմ ապահով տուն երթալ։ Թէև, ճիշտը խոստովանած, ես չէի ուզում այդպէս շուտով ձգել իմ ապաստանը, բայց ստիպուած էի հեռանալ, որովհետև այդ օրը Լաստի և Ռօզէնդօրֆի մօտ Պետերբուրգից հիւրեր էին եկել և ըստ երևոյթին նեղուածք էր։

Երբ ես անցնում էի Լաբինսկի գնդի դիւանատան մօտով՝ մէկ կազակ վազեց ընկերների մօտ և ըստ երևոյթին իմացրեց նրանց իմ վերադարձը, դրա համար էլ դիւանատան մէջ յանկարծակի իրարանցում ընկաւ և շատերը դուրս նետուեցին ինձ տեսնելու։

Ես հասայ բնակարանս և մտածում էի ի՞նչպէս ազատուել այս գաղութից և ընկնել Գանձակ։

Ցանկարծ բակիս մէջ յայտնուեց մի զինեալ կազակ և կատաղած դէմքով մօտեցաւ պատուհանիս, բայց չկարողացաւ ինձ տեսնել և նորից փողոց անցաւ։ Յետոյ դեղատուն մտաւ, օգնականից գնեց ինչ-որ բան և հեռացաւ։ Մի քանի րոպէից յետոյ նորից մտաւ դեղարան, գնեց ինչ-որ մի հասարակ բան և դարձեալ հեռացաւ։ Ես զգացի, որ նա ինձ որոնում է և դրա համար էլ դուրս չեկայ սենեակիցս։ Յետոյ գերմանական դպրոցի երկու ուսուցիչ մտան դեղատուն, դեղ գնեցին և ցանկութիւն յայտնեցին ինձ տեսնել։ Ես դուրս եկայ և նոյն րոպէին դեղարանիս դռները բացուեցին ու իմ առաջ տնկուեց նոյն կազակը, բարևեց և խնդրեց քսան կոպէկի ոդելից իւղ։ Ես ասացի օգնականիս, որ նա անմիջապէս տայ պահանջած առարկան ու ինքս սկսեցի խօսակցութիւն կապել ուսուցիչների հետ, որպէսզի սրանք դուրս չգան դեղարանից։ Բայց նրանք շուտով նկատեցին կազակի այլայլումները և անմիջապէս ընդհատելով խօսակցութիւնը դուրս եկան դեղարանից։ Այդ ժամանակ կազակը անուշադիր թողնելով պահանջած իւղը, մօտեցաւ կանգնեց առաջս և հարցրեց.

— Ո՞վ է դեղարանի տէրը։

— Ե՛ս, պատասխանեցի և իսկոյն գլխովս անցաւ այն միտքը՝ թէ նա եկել է ինձ սպանելու և քարացայ։

Սակայն ի զարմանս իմ նա գրպանից ինչ որ գրութիւն հանեց, դրեց առաջս սեղանի վրայ ու ասաց.

— Ահաւասիկ այս թուղթը Լաբինսկի գնդի առաջին հարիւրակից, յանձնեցէք Գանձակի հայ կոմիտէին և մեզ պատասխան բերէք։

Յետոյ նա գրպանից մատիտ և մաքուր թուղթ հանեց, առաջարկեց իրեն ստորագրութիւն տամ, թէ ստացայ այս գրութիւնը։

— Ես չեմ կարող կատարել ձեր յանձնարարութիւնը, պատասխանեցի ես, որովհետև չգիտեմ ո՞ւր է գործում հայ կոմիտէն և ո՞վքեր են նրա անդամները։

— Ստորագրեցէ՛ք, ստորագրեցէ՛ք, կրկնում էր կազակը, ուշադրութիւն չդարձնելով իմ խօսքերին։

— Եթէ այդպէս է գնանք հրամանատարի մօտ, ասացի ես, եթէ ես պարտաւորուած եմ վերցնել այդ գրութիւնը՝ կը վերցնեմ գնդապետից։

— Ստորագրեցէ՛ք, պահանջում էր կազակը և հեռզհեռէ աւելի ու աւելի այլայլւում։ Նրան բռնել էր նեարդային դող։

— Ո՞վ էք դուք, հարցրի ես, ի՞նչպէս է ձեր անունն ու ազգանունը, որպէսզի ես գիտնայի թէ ո՞ւմից եմ ստանում այս գրութիւնը։

— Ստորագրեցէ՛ք, վերջապէս, կանչեց կազակը և ձեռքը տարաւ դէպի դաշոյնը։

Բոլորն ճակատագրական էր։ Ըստ երևոյթին կազակին յանձնարարուած էր սպանել ինձ, եթէ ես մերժեմ գրութիւնը, և նա պատրաստ էր վճռական հարուածի համար։

Ինչ կարող էի անել։ Ես մենակ էի, իսկ նրա յետևում բոլոր դունդը և ամբողջ ռուս կառավարութիւնը։ Ես վճռեցի իզուր չգրգռել այդ բարբարոս կազակի ձեռքով, կատարել առայժմ նրա պահանջը, յետոյ մտածել և գործել կամքիս համաձայն։

— Թելադրեցէք, ասացի կազակին, ի՞նչպիսի ստորագրութիւն էք ուզում։

Եւ նա թելադրեց. „Ստացայ առաջին Լաբինսկի գնդի առաջին հարիւրակի գրութիւնը" (յետոյ ստորագրութիւնս)։

Ստանալով ստորագրութիւնս արագ յետ դարձաւ և շուտով թողեց դեղատունս։

Փողոցում սպասում էին ընկերները։ Մօտեցաւ նրանց, յետոյ մտաւ գնդի գիւանատունը, որ գտնւում էր դեղարանից մի քանի քայլի վրայ։

Մի քանի րոպէ անց՝ գիւանատնից դուրս եկաւ մէկ սպայ ստորագրութիւնս ձեռքին և գիմեց դէպի գնդի հրամանատարի բնակարանը։

Քիչ հանգստանալով՝ ես իսկոյն ընդգծեցի ապագայ գործողութիւնների պլանը, կարդայի կազակից ստացած գրութիւնը, որի լուսանկարչական պատճէնը դնում եմ ստորև.

Հայ կոմիտէին,

Գանձակ քաղաք.

Գերմանացի Գուրրին սպանել էք դուք. նոյն մարդասպանները սպանել են մեր ուրեադնիկ Եախնօին եւ միւսներ երկու կազակ: Դրա համար պահանջում ենք ուղարկել անյապաղ գնդի անունով տասը հազար ռուբլի՝ զոհուածների ընտանիքներին յանձնելու համար:

Այս պահանջը անում ենք դեղագործ Մամիկոնովի միջոցով:

ԼԱԲԻՆՑԻՆԵՐ



Армянскому Комитету
въ Городѣ Елисаветполѣ

Начальникъ Гуръ убитъ вами, этими-же убійцами убитъ нашъ Урядникъ Ахно и ранены два казака, поэтому требуемъ выслать не медленно на имя полка десять тысячъ рублей для выдачи семьямъ пострадавшихъ.
требованіе это передаемъ черезъ аптекаря Мамиконово

Лабинцы.

Նախ և առաջ օգտուելով երեկոյեան մթութիւնից՝ ես թողեցի բնակարանս և գնացի պարոն Լասսի մօտ։

Լասսը, Ռօզենդօրֆը և նրանց հիւրերը իմանալով ինձ հետ պատահածը՝ զարմացան։ Նրանք չէին հաւատում, որ նման արտագրաւման ձևեր թոյլատրւած են մեր կառավարութեան գնդերի մէջ. սակայն իրողութիւնը ակներև էր։

Ռօզենդօրֆի հիւրերից մէկը, գնդապետ բարոն Բ. յաջորդ առաւօտ պիտի գնար Պետերբուրգ։

Բարոնին ուղեկցող խմբին միանալով ես յաջողութեամբ հասայ Գանձակ։ Բայց ո՞ւմ տալի կազակների գրութիւնը. ահաւասիկ հարցը. ո՞վ կը վերցներ. ոչ ոք։

Ինձ մնում էր դիմել Գանձակի հայերի ներկայացուցիչներին՝ խնդրելով, որ կամ՝ ցոյց տան կոմիտէի սրեկ անդամին և կամ՝ խորհուրդ տան ի՛նչ անեմ՝ գրութիւնը։ Ոմանք խուսափում էին ինձանից, ոմանք էլ խորհուրդ էին տալիս ներկայացնել գրութիւնը տեղական գեներալ-նահանգապետին և բողոքել կազակների արարքի դէմ։ Մի քանիսները պնդում էին սրա վրայ։

Բայց ի նկատի ունենալով, թէ ում պիտի բողոքէի և որի դէմ՝ ես եկայ այն եզրակացութեան, որ գեներալ-նահանգապետը և տեղական միւս իշխանութիւնները, որոնց գիտութեամբ գուցէ և մասնակցութեամբ կատարւած է ամեն ինչ՝ չպիտի ինձ պաշտպանեն, այլ ընդհակառակը պիտի բանտարկեն, ինչպէս բանտարկել են և բանտարկում են շատ անմեղ հայեր։

Ես վճռեցի նամակ գրել առաջին Լաբինսկի գնդի հրամանատար Շչերբինային—որի հետ ես անձամբ ծանօթ էի—յայտնել նրան պատահածը, խնդրել որ քննէ իր կազակների ձեռքով ստեղծած այս մութ գործը և ինձ ազատ համարէ չկատարելու այդպիսի մի ապօրինի և բռնի յանձնարարութիւն։

Այդ ժամանակ քաղաքում լուրեր էին պտտում՝ թէ իբր կազակները պատրաստւում են Գանձակի հայկական թաղում պօգրոմ սարքել և սպասում են Թիֆլիսից օգնութեան։

Շատ հայեր թողեցին տուն, խանութ, կայքեր և հեռացան զանազան կողմեր։

Վերջապէս Թիֆլիսից զօրքեր եկան և տեղաւորեցին հայերի տներում, որոնք արդէն դատարկւած էին 24 ժամւայ ընթացքում, գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ։ Այս ծանր պատիժը այն պատճառով՝ իբր թէ հայերը կազակների վրայ կրակ են բացել Եախնօի թաղման ժամանակ։

Ես դեռ նամակիս պատասխանը չէի ստացել գնդապետ Շչերբինայից։

Օգոստոսի 20-ին, առաւօտեան ժամը 10—11-ին, ես նստած էի մօտս մօտ և մտածում էի, թէ ի՛նչ վախճան կունենայ այս զզուելի պատմութիւնը։ Ցանկարծ հրացանաձգութիւն սկսեց քաղաքում, սարսափ ընկաւ և հայերը սկսեցին փախչել փողոցներով գլուխներն կորցրած։

Փախչողներին հարցուփորձելով ես իմացայ, որ հայոց թաղում կազակներ են եղել շրջելիս. մէկը նրանցից դիտամբ կրակում է ձիու տակին և աղաղակում, թէ հայերը կրակեցին իրեն։ Սպայի հրամանի համաձայն կազակները վար են իջնում ձիաներից և սկսում կոտորել հայերին՝ չխնայելով ոչ ծերերին, ոչ երեխաներին և ոչ կանանց։

Ես հրաժարւում եմ այդ արիւնահեղ ողբերգութեան մանրամասն նկարագրութիւնից, բայց կազակների գազանութիւնները բնորոշելու համար՝ ես կը յիշեմ մի ամսթալի արարք։

Ընդհանուր խառնակութեան ժամին՝ մի երիտասարդ կին իր միակ զաւակը կորցնելով՝ դուրս էր եկել փողոց, տեսնելու համար այնտեղ չէ՞ մնացել արդեօք։ Սակայն նկատելով մօտեցող կազակներին, յետ է դառնում և դեռ դուռը չփակած՝ կազակները յարձակւում են նրա վրայ, լլկում, բաց անում փորը, կտրում մատներն ու ականջները, որպէսզի մատանիներն ու օղերը հանեն։ Ասում են, թէ դիակի ճեղքման ներկայ եղող քննիչը չէ կարողացել իրեն զսպել և յայտնել է, որ ինքը իր տասնհինգամեայ պաշտօնավարութեան ընթացքում նման բան չէ տեսել։

Հրացանաձգութիւնը տակաւին շարունակւում էր։ Փողոց-

ները դատարկեալ էին և քաղաքի ամբողջ հայ խաղը մեռած էր։

Ցանկարծ նկատեցի մի խումբ ձիաւոր կազակներ ոչ այնքան հեռու այն տնից, ուր ես էի գտնուում։ Վախենալով շրջապատուել և սպանուել, ես ծածուկ դուրս եկայ տնից և թանգնուեցի հարևան խուլ անկիւններում։

Կազակները չբաւականացան անմեղ մարդկանց արեամբ և սկսեցին փողոցների լամպարները հանել, բնակիչների դռները նաւթ լցնել՝ աշխատելով հրդեհել տները։

Ես վազում էի խուլ փողոցներով և ապաստան էի որոնում։ Վերջապէս ես հասայ մի հայ եկեղեցու բակ. դռները բաց էին։ Ցոյս ունէի պատսպարուել նրա մէջ։ Աւա՜ղ, եկեղեցու գանձապետը չ՝ընդունեց ինձ, փակեց եկեղեցին և վազեց իր տունը։ Ես մենակ մնացի։

Կազակները մօտենում էին։ Հրացանաձգութիւնը ուժեղանում էր։ Սարսափելի վայրկեան էր։ Ես նորից սկսեցի վազել ու վազել, մինչև որ հասայ իմ ազգականներից մէկի այգին, ուր և թաքնուեցի։

Երբ որ վարչական այդ արիւնհեղութիւնից տեղական իշխանութիւնը հանգիստ առաւ և, սպայի հրամանի համաձայն փողհարելով յետ կանչեցին կազակներին՝ ես դուրս եկայ փողոց իմանալու համար քաղաքացիների կացութիւնը։ Ցանկարծ այգին մտան և առաջս անկուեցին երկու երիտասարդ հայ գիւղացի և առաջարկեցին իրենց ծառայութիւնը՝ հասցնել ինձ երկաթուղու կայարաններից մէկը կամ որևէ հայ գիւղ։ Իմ հարցին՝ թէ ինչու են կամենում յանձն առնել այդ նեղութիւնը՝ նրանք պատասխանեցին. „ասելով այն բոլորի մասին, ինչ պատահել է ձեզ հետ՝ կամենում ենք ազատել ձեզ վերահաս վտանգից“։ Ես հաւատացի նրանց և, խոստովանում եմ, ինձ շատ դուր եկաւ նրանց առաջարկը, մանաւանդ որ ինքս էլ էի մտածում որևէ կերպ դուրս դալ Գանձակից։

Բայց երբ նրանք գնացին ձիաներ բերելու և ես պատրաստուում էի երեկոն հանելուն պէս իսկոյն դուրս գալ՝ ինձ մօտ եկաւ ազգականիս հարևանը և խորհուրդ տուեց ոչ մի պայմանով չգնալ այդ մարդկանց հետ։

Տեղական հայերի մէջ լուր էր տարածուել, թէ իբր ես կազակներին մի ինչ որ սարսափելի ստորագրութիւն եմ տուել, այդ պատճառով մի քանի երիտասարդներ զայրացել էին և կամենում էին ինձ սպանել։ Ես զգացի ինձ երկու կրակի մէջ։ Շատ չմտածելով տեղս փոխեցի, ծպտուեցի ու գիշերը հասայ երկաթուղու կայարանը, այնտեղից էլ Թիֆլիս։

Մի քանի օր յետոյ ես ստացայ առաջին Լաբինսկի գնդի հրամանատար Շչերբինայից իմ նամակի պատասխանը, որի լուսանկարչական պատճէնը դնում եմ ստորև.

31/VIII, Ելիզաւետգրատ

Ցարգելի պարոն,

Որ դուք պահանջում էք կուսակցութեան, այդ ամենին յայտնի է ու ամենքը խօսում են այդ մասին, ձեզ ի հարկէ յայտնի չէ. բայց ձեզ յայտնի է, որ „մախաթր տպրակի մէջ չի ծածկուի“։ Ինչո՞ւ չէք ապրում գաղութում (Ելիզաւետգրատում). չգիտեմ. այստեղ ոչ ոք ոչ ոքի չի սպանում եւ ով որ մեղք չունի հանգիստ ապրում է, իսկ որոնց մասը խառն է՝ նրանք իր ժամանակին հեռացել են, ինչ որ արել էք դուք՝ վախենալով ինքնութիւնից եւ յետոյ դատարանից։ Կարծեմ ձեզ ինքնութեան են կանչում Դուրի սպանութեան գործով. դրանք լուրեր են, պնդել չեմ կարող։ Եթէ կազակներ յանձնարարել են ձեզ կատարել իրենց պահանջը—օրինակա՞ն է նա թէ ապօրինի—դուք պարտաւոր էիք կատարել եւ ոչ թէ յայտնել սրան-նրան. դրա մէջ էք դուք մեղաւոր եւ վախեցէք հատուցումից։ Նախազգուշացնում եմ ձեզ, որ ես ցանկերս գործ եմ դնում բոլորի հետ խաղաղ եւ հանգիստ ապրելու, ինչպէս կազակները ապրում էին բոլորի հետ։ Բայց Երբ հայերը առիթ տան, այն ժամանակ ի հարկէ կազակին չէր կարելի պահել. եթէ որեւէ մէկը փորձէ յարձակուել կազակի եւ սպաների վրայ, այն ժամանակ ինքնակամ փրկութիւն չի լինի. կը տուժեն թէ արդարը եւ թէ մեղաւորը, թէ երիտասարդը եւ թէ ծերը։ Այս խնդրում եւ նախազգուշացէք։ Իմ ձեռքին չէ ձեզ որեւէ օգնութիւն տալը։ Երեւում է, որ կոլոնիստները ձեզնից գոհ չեն, դիմեցէք նրանց։

Ձեր ԴՐ. ՇՉԵՐԲԻՆԱ

31/VIII

Елизаветград

Милостивый Государь

Что Вы принадлежите к партии, что всем известно и весь город он знает, Вам казаться не нужно, но существует Ваш, что вторые Шиповники не годятся. Почему Вы не знаете в Кишине и не знаете, пусть тихо никого не трогаете, живете, а у кого рыльце в пуху, что тот подвергается опасности. Своевременно уехали,

Что случилось и Вас, было бы лучше, а за исключением случая, Казаки привыкшие к этому образу жизни, но Друг Друга и живут. Если Казаки и Корнеевы Вам вменили в корысть захотели сделать что не захотели Вы дайте знать, а не разгласуйте всем и Казакам что Вы и выражайте и боитесь возмездия, предупреждаю Вас, чтобы Вы Друзьям указали что, чтобы



Մեկնաբանութիւնները աւելորդ են այս կոպիտ նամակի բովանդակութիւնը հասկանալու համար։ Ընթերցողը միայն այս նամակից կարող է պարզ կերպով պատկերացնել ի՞նչպիսի բարբարոս կարգեր կան Ռուսաստանում և ի՞նչ է հայ կոչուած մարդու դրութիւնը։

Բարեհաճեցէք տեսնել՝ թէ ի՞նչ է գրում ինձ գնդապետը. „Եթէ կազակները յանձնարարել են ձեզ կատարել իրենց պահանջը — օրինական է դա թէ ապօրինի — դուք պարտաւոր էիք կատարել և ոչ թէ յայտնել սրան-նրան. դրա մէջ էք դուք մեղաւոր և վախեցէք հատուցումից“։

Ինձ ի՞նչ էր մնում անել այդ բոլորից յետոյ։ Այդպիսի պայմաններով կարելի՞ էր արդեօք ապրել Ռուսաստանում։ Ակներև է, որ պիտի փրկութիւն որոնէի փախուստի մէջ՝ անմեղ լինելով հանդերձ։

Իմ բացակայութեան ժամանակ բոլոր գործերս փճացան, ձեռագիրներս և մի քանի թանկագին իրեր տարան խուզարկութեան միջոցին։ Գաւառապետը իմ հաւատարմատարներին դրել էր այնպիսի դրութեան մէջ, որ նրանք հարկադրուած են եղել ծախել դեղարանս կօլոնիստներին չնչին գնով այն ժամանակ, երբ ես Թիֆլիսից ուղարկել էի լաւ գնողներ։

Այսպէս. զրկելով կայքերից և այլևս հնարաւորութիւն չունենալով մնալ այսպիսի պետութեան մէջ՝ ես սիրով թողեցի հայրենիքս, որպէսզի ապրեմ և մեռնեմ արևմտաեւրոպական պետութիւններից մէկի մէջ, որտեղ կարգ կայ, օրէնք կայ և ուր մարդու անձը անձեռնմխելի է։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

18 Նոյ. 1909

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ԹԻՒՐՔԻԱՆ

I

Քսաներորդ դարու քաղաքական ամենամեծ գէպքերէն է անշուշտ Թիւրքիոյ վերածնունդը։ Պատմութիւնը դժբախտաբար աւելի յաճախ չի յղանար այդպիսի խորունկ ու նշանակելի իրողութիւններ, որոնք ամբողջ երկրի մը արիւնոտ անցեալը կը վարագուրեն, կը պատանքեն՝ բանալու համար յուսատու ապագաներուն նախադուռը։

Ինչ որ ալ ըլլայ Թիւրքիոյ երկու տարեկան սահմանադրութիւնը, որքան ալ պակասներ պարունակէ իր մէջ այդ անփայլ պետութեան քաղաքական ստեղծագործութիւնը՝ անիկա այնուամենայնիւ կարևոր սկզբնաւորութիւն մըն է և պերճախօս ապացոյց քաղաքակրթութեան մեծազօր ոյժին և յարակայ շարժումին։

Անակնկալ և, ըստ երևոյթին, պատահական մղումով պատմութեան ասպարէզը նետուած այդ փոփոխութիւնը զարմանք պատճառեց պատմագէտներէ և ընկերաբաններէ շատերուն։ Ըստ երևոյթին երկրի անցեալ կեանքը չպիտի կրնար այդպիսի ապագայ ստեղծել, կարծէք

գոյութիւն ունեցող նիւթերը—Թիւրքիոյ քաղաքական-հասարակական-քաղաքակրթական-տնտեսական պայմանները—անբաւարար էին այդպիսի արդիւնք ստանալու համար։

Թիւրքական յեղափոխութեան և սահմանադրական ներկայ իրաւակարգի պատմութիւնը ապահովաբար պիտի գրուի օր մը։ Այսօր, սակայն, երբ չափազանց մօտ ենք այդ խոշոր եղելութեան՝ անկարելի է մէկէն ըմբռնել բոլոր պատճառները և խորանալ մինչև իսկական հիմունքը։

Թէ ինչպէս ծնեցաւ այդ կարևոր յեղափոխութիւնը, ինչպէս գործեց նա, ինչ ազդակներէ ներշնչեցաւ, ինչ փուլերու մէջէն անցաւ կարճ տևողութեան մը միջոցին, ինչ գործելակերպ հրապարակ բերեց, ինչպէս համախմբեց իր ոյժերը, ինչ ուղղութեամբ դիմադրեց հին ռէժիմին և ո՛ւր հարուածներ տեղաց—այս բոլորը ապագային երևան կուգան պատմական և ընկերական գիտութիւններու մէջ։ Այսօր մենք կը տեսնանք երևոյթը, կը գոհանանք եղածով, մակերևոյթապէս կ'ըմբռնենք իրողութիւնը, գուհկօրէն կը վերլուծենք շարժման մէկ քանի խոշոր գիծերը և ատկէ աւելի չենք կրնար առաջ երթալ։

Մինչդեռ մեր ընելիքներու տեսակէտէն, մեր գործնական քայլերուն համար՝ անհրաժեշտ է շատ թէ քիչ հանգամանալից ծանօթութիւնը այն շարժառիթներուն և սկզբունքներուն, որոնք հիմնաւորեցին, պայմանաւորեցին և ստեղծագործեցին ներկայ եղելութիւնը։

Մեր յօդուածով մենք յաւակնութիւն չունինք լուսաբանելու դէպքը իր ծագման, զարգացման և արտայայտութեան մէջ՝ անհրաժեշտ և ցանկալի մանրամասնութեամբ։ Խոշոր պակաս մը լրացնելու համար չէ, որ գրիչ կ'առնենք։ Մեր նպատակն է մեր ոյժերը ներածին չափ քննել այն խնդիրը՝ թէ օսմանեան նոր իրաւակարգը պատմական ինչ հիմքեր ունի, հասարակական և քաղաքական ինչ յենարաններ և ապագայի ինչ հաւաստիքներ։ Պատմութիւն չպիտի առաջարկենք անշուշտ և ոչ ալ անցեալ վերանորոգութեանց պատկերը պիտի ներկայացնենք։ Սակայն այժմեան կեանքը և քաղաքական-ընկերական վիճակը վերլուծման ենթարկելէ առաջ՝ համառօտակի պիտի յիշատակենք այն պայմանները, որոնց մէջ զարգացաւ այսօրուան իրաւակարգի և պետական ձևի սաղմը։ Ապա պիտի ընդգծենք վերանորոգութեան այն սկզբնական վարանոտ փորձերը, որոնց ծնունդը և զաւակը կը հանդիսանայ քսաներորդ դարու Թիւրքական յեղափոխութիւնը և սահմանադրական վարչակարգը։ Այս թռուցիկ վերյիշումը գուցէ կրնայ նպաստել երևոյթի աւելի ամբողջական ըմբռնումին։

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆՑ ՓՈՐՁԵՐ

—

Տասնիններորդ դարու առաջին քառորդին Թիւրքիան կը գտնուէր ճակատագրական կացութեան մը մէջ։ Անցեալ ոյժը, քաղաքական-զինուորական-դրամական կարողութիւնը այլևս չկար։ Պետութիւնը կազմալուծուած ու միանգամայն անհամապատասխան այն միջավայրին և այն ժամանակին, որու մէջ կ'ապրէր։ Երրորդ ճանապարհ չկար։ Վաղեմի այդ խոշոր զանգուածը յուսահատական երկընտրանքի (alternative) էր դատապարտուած. կամ պէտք էր եւրոպականանալ, նորանալ, յարմարուիլ ու համակերպուիլ նոր քաղաքակրթութեան ու նոր սկզբունքներուն և կամ պէտք էր իջնալ պատմութեան երկարամեայ բեմէն։ Բնական օրէնքը և աշխարհիս անհրաժեշտութիւնը չէր կրնար հանդուրժել ուրիշ ճանապարհ։

Երկուքն ալ, սակայն, հաւասարապէս դժուարին էին և երկուքն ալ հաւասարապէս անտանելի։ Դժուարին էր քաղաքակրթութեան շաւղին վրայ դնել այն խաւար, մութ, խայտաբղէտ զանգուածը, որ օսմանեան պետութիւնը կը կազմէր։ Հնադարեան, անհեթեթ այդ հասարակութիւնը, որու ներսը կը շարժուէին տակաւին նախապատմական բնազդները, որու մառախլապատ գիտակցութիւնը չէր հասկընար պատմութեան պահանջը, որու անդամները կեդրոնախոյս ոյժի հետևանքով կը թուլացնէին ընկերական կազմուածքը (օրգանիզմը), —այդպիսի հասարակութիւն մը չէր կրնար մէկէն կանգնել և քալել այն միջավայրին մէջ, որ աւելի հասուն և աւելի հանճարաւոր ժողովուրդներուն ստեղծագործութիւնն էր։

Միւս կողմէ անտանելի էր և անընդունելի քաղաքական և պետական մահուան, ոչնչացման գաղափարը։

Տասնիններորդ դարու Թիւրքական ամբողջ պատմութիւնը այս կրկնակի դժուարութիւններուն արդիւնքն է և այս ընդհարման հարազատ ժառանգը։ Երկրին բոլոր խնդիրները և բոլոր մտահոգութիւնները այս հիմնական հակադրութենէն կըսկզբնաւորին և այս երկընտրանքին շուրջը կը դառնան։

Վերանորոգութեան տրամադրութիւնները կուգան հասարակութեան վերին շերտերէն։ Այս գիծը չափազանց բնորոշիչ է Թիւրքիոյ պատմութեան համար։ Ստորին խաւերը, շահագործուող դասակարգերը չէին, որ որ առաջին անգամ փոփոխութեան ու յեղաշրջման մասին խօսեցան։ Կրօնական նախապաշարումներու և դարաւոր ստրկութեան մէջ թաղուած՝ անոնք իրականութեան գիտակցութիւնը չունէին։ Դանդաղաշարժ էին ու պահպանողական։ Այս պարագան — ընկերական շէնքի ներքին խաւերու այս անտարբերութիւնը—կարևոր ու ճակատագրական նշանակութիւն ունեցաւ Թիւրքական յեղափոխութեան ու քաղաքական վերածնունդի համար։

Եւրոպական քաղաքակրթութեան հետ անմիջական շփումն ունէր երկրին տրտօնեալ դասակարգը։ Անիկա էր տակաւին կրթութեան ու գիտակցութեան տէրը։ Զարմանալի չէ, ուրեմն, որ եւրոպական յառաջադէմ և նորագոյն գաղափարները անոր մէջ պատուաստեցան։

Եւ այսպէս. երկրին ու պետութեան վերակազմութիւնը այդ դասակարգէն սկզբնաւորուեցաւ և բաւական երկար ատեն այդ դասակարգին մէջ մնաց։ Բէյեր, փաշաներ, զօրավարներ, նախարարներ, անգամ կայսրներ, ներշնչուեցան այդ գաղափարով։ Ըստ երևոյթին տարօրինակ այս իրողութիւնը իր հոգեբանական և հասարակական պատճառներն ու հիմնաւորումներն ունի։

Ռուսաստանի մէջ ալ յեղափոխական նախնական գործունէութիւնն ու շարժումը հասարակութեան վերին շերտերու մէջ սկսուեցաւ։ Արտօնեալ և տիրող դասակարգերէն եկան—աւելի քան ուրիշներէն—պետական փոփոխութեան տենչանքները։ Մինչև որոշ աստիճան

այս երևոյթը ընկերաբանօրէն հասկանալի է և ըմբռնելի։ Նորագոյն գաղափարները—պատմութեան մէջ յաճախ նկատուած է և բանական է միանգամայն, որ հասարակութեան վերին շերտերէն սկիզբն առնեն։ Դժբախտաբար մեր յօդուածի ծաւալը և նպատակը չեն թոյլատրեր աւելի մանրամասն քննել և լուսաբանել պատմական-ընկերաբանական այդ վերին աստիճան հետաքրքիր երևոյթը։ Թիւրքիոյ պատմութեան համար բացի ընդհանուր բացատրութենէն՝ այս կարևոր իրողութիւնը ունի նաև իր մասնակի մեկնաբանութիւնը։

Պետական վերակազմութեան անհրաժեշտութիւնը թիւրքական աշխարհին մէջ՝ գէթ բաւական երկար ժամանակ՝ չէր նպատակադրեր հասարակութեան միջին կամ ստորին խաւերու բարեկեցութիւնը։ Մինչդեռ ուրիշ երկիրներու մէջ քաղաքական յեղափոխութիւններն ու վերանորոգութիւնները ի նկատ ունեն հասարակութեան անիրաւուած մասի մը բարձրացումը, զրկուած դասի մը իրաւունքները — թիւրքական յեղափոխութիւնն ու վերածնունդը ուրիշ նպատակ ունեցան՝ պետութեան անխախտ պահպանումը։ Եւրոպական քաղաքակրթութիւնն ու մեծ պետութիւններու քաղաքականութիւնը կըսպառնար Թիւրքիոյ անկախութեան և ատոր հետ մէկտեղ ամենէն աւելի տիրող դասակարգերու, կառավարութեան շահերուն։

Վտանգը արտաքին էր և չափազանց հրամայական։ Այս գիծը ևս կարևոր առանձնայատկութիւն կը հաղորդէ թիւրքական ազատագրական շարժման։ Անոր բոլոր սայթաքումները, երկար տարիներու ընթացքին մէջ ի յայտ բերած վատառողջ կողմերը, յուսահատական անյաջողութիւնները մեծ մասամբ պիտի բացատրուին այս պատմական հանգամանքով։

Շարժումը մէկ կողմէ սկիզբ կ՚առնէր վերին, արտաքնեալ խաւերու մէջ և չափազանց դանդաղութեամբ կ՚իջնար դէպի ստորին, ժողովրդական խաւերը։ Միւս կողմէ՝ վերանորոգութեան պահանջը կը մեկնէր արտաքին միջավայրէ և կը յառաջանար դէպի ներքին միջավայրը։ Այս կրկնակի առանձնայատկութիւնները—որոնք իրարով պայմանաւորուած են—իրենց անջնջելի կնիքը կը դնեն թիւրքական շարժման ամբողջ պատմութեան վրայ։ Այդ շարժման սև կողմերը և ապիւնոտ հիասթափումները աւելի պարզ և աւելի ըմբռնելի կը դառնան, երբ յուշ ածենք վերոյիշեալ երկու առանձնայատկութիւնը։

Այսպէս թէ այնպէս սկսեցան վերակազմութեան փորձերը Օսմաններու հնադարեան պետութեան մէջ։ Եւ այս իրողութիւնը—ինչ շարժառիթներէ և ինչ պատճառներէ ալ առաջացած ըլլայ—չափազանց նշանակելի է Թիւրքիոյ համար։ Տասնիններորդ դարը անոր անկման և կազմալուծման դարն եղաւ, բայց միանգամայն դարը անոր ստեղծագործութեան և վերածնունդի։ Ընցեալ դարերու յախուռն աշխարհակալութեան, հզօր նաւատորմիղներու, որոտընդոստ փառքերու մէջ թաղնուած էր սաղմը իր յետագայ նաւաստացման ու փոքրութեան. իսկ տասնիններորդ դարուն անյաջողութեան, դժբախտութիւններու մէջ կը զարգանար կորիզը անոր ապագայ մեծութեան ու բարգաւաճման...

Ցունական ապստամբութեան ժամանակ ակնյայտ եղաւ, որ Թիւրքիոյ զինուորական սիստեմը մէկէ աւելի անմխիթար կողմեր ունի։ Վայրենի, բարբարոս, ցիրուցան բանակները, ենիչէրիները թերևս անցեալին մէջ օգտակար ծառայութիւններ էին մատուցած օսմանեան պետութեան՝ տասնիններորդ դարուն ապիկար և անկարող գտնուեցան։ Կեդրոնական կառավարութիւնը հարկադրուած եղաւ թափառական և ժամանակաւոր զօրքը մշտական զօրքով փոխարինել. մահմեդականութեան վաղեմի աւանդները տեղի պիտի տային եւրոպական ձևերուն և սիստէմներուն։ Ասիկա շատ մեծ նշանակութիւն և կարևորութիւն ունէր պետութեան ընդհանուր վերակազմութեան տեսակէտէն։ Ատով կը մատնանշէր առհասարակ յառաջադիմութեան, փոփոխութեան անհրաժեշտութիւնը։ Անկազմակերպ, խառնիխուռն և անկարգ զինուորական-քաղաքական-հասարակական կացութենէն ելնելու առաջին լուրջ փորձն էր ատիկա և այդ պատճառով է, որ ենիչէրիներու ոչնչացման ծրագիրները և զօրքի եւրոպականացման հմտարձակ որոշումը կարևոր տեղ ունին Թիւրքիոյ պատմութեան մէջ։

Մահմեդական հասարակութեան կրօնական և բարոյական աշխարհահայեցքը ըմբոստ տրամադրութիւններ կը թագնէր անկասկած դէպի պետութեան վերանորոգութեան այդ սկզբնական փորձը, սակայն գործօն թշնամութիւն ու դիմադրութիւն չէր ցոյց տար տակաւին։ Ժողովուրդը դանդաղաշարժ էր, անուշադիր և անհետաքրքիր ըստ երևոյթին։ Ասպարէզը մնացած էր կառավարութեան և քաղաքական բարձր շրջանակներուն, որոնք կը մտածէին երկիրը եւրոպականացնել կրօնական ըմբռնումներու և մահմեդական ժողովրդին հաւանական դիմադրութեան հանդէպ՝ անոնք խաղաղ և արդիւնաբեր միջոց հանդէս բերին։

Ցոյց տալ հասարակութեան, որ Մահմեդի կրօնքը և դարերով սրբագործուած Շէրիաթի սկզբունքները բնաւ հակասութեան մէջ չեն երկրի վերածնունդին ու եւրոպականացման. քարոզել լայն խաւերու մէջ, որ նոր գաղափարները, պետութեան վերանորոգութիւնը անհամապատասխան չեն օսմանեան ժողովրդին դարաւոր բարքերուն ու սովորութիւններուն։

Կրօնական վարդապետութիւններու ազատական մեկնաբանութիւնը — ահաւասիկ այն գործելակերպը, որ երևան եկաւ Թիւրքական վերանորոգութեանց արշալոյսին՝ եւրոպականացման և վերակազմութեան կողմնակիցներու մէջ։ Այդ քաղաքականութիւնը մասամբ անկեղծ, մասամբ հարկադրեալ, ունեցաւ իր նպաստաւոր արձագանգները օսմանեան վերածնունդի ամբողջ տևողութեան միջոցին։ Այսօր ևս, աւելի քան ութսուն տարի յետոյ, երիտասարդ Թիւրքերը իրենց գործունէութեան դժուարին ու փոթորկոտ ճանապարհին յաճախ դոյզ կը դնեն այդ մեթոդը։

Հին դասակարգերը և օսմանեան պետութեան ապիկար վարիչները այդ քաղաքականութեան հակադիր քաղաքականութիւն կը կիրարկէին դարերէ ի վեր։

Կրօնքը յիրաւի թշնամական և աւազակային այն տրամադրութիւնները չէր ներշնչեր դէպի Թիւրքիոյ ոչ-մահմեդական տարրերը, ինչ որ իրենք, պետութեան վատթար տէրերը կը յղանային և չարամտօրէն կը տարածէին։ Տիրապետութեան և շահագործումի ամե-

նայարմար գործիքն է եղած կրօնքը բոլոր հասարակութիւններու և բոլոր երկիրներու մէջ։ Քրիստոնէական կրօնքը ևս—չնայելով իր ռամկավարական և հաւասարութեան ակնյայտ տրամադրութիւններուն—երկար դարեր եղած է լաւագոյն գործիքը աղէտաւոր տիրապետութեան և անմարդկային շահագործման։ Մահմեդական կրօնը հակաքրիստոնէական բռնաւոր և գործօն թշնամութիւն չէ արդարացներ, մինչդեռ մահմեդական հասարակութեան և պետութեան ղեկավարները՝ յանուն իրենց շահերու և դասակարգային օգուտներու՝ նետած են անգիտակից և խաւար ամբոխները, Մահմեդի դրօշակի տակ, քրիստոնեայ ժողովուրդներու վրայ։ Մահմեդականի ու քրիստոնէի հակամարտութիւնը աւելի հասարակական-քաղաքական-դասակարգային հակամարտութիւն է, քան կրօնական-դաւանաբանական։ Յետագային՝ սովորութիւններու և աւանդութիւններու հետևանքով այդ հակամարտութիւնը աւելի ուժեղ կերպարանք ընդունեց և կրօնական երևոյթ ստացաւ։

Քանի որ, ուրեմն, Թիւրքիոյ տարբեր դաւանանք ունեցող ժողովուրդներու հակամարտութիւնը պատմութեան ընթացքին մէջ է ամրապնդուած, հասարակական-քաղաքական-տնտեսական որոշ ազդեցութիւններու ներքև ամրացած՝ հնարաւոր է նաև, նոյնպէս պատմականօրէն, վերացնել այդ հակամարտութիւնը։

Մանաւանդ որ կրօնական կասկածելի հակամարտութիւնը և դաւանաբանական երևոյթական թշնամութիւնը ժամանակի հետ, քաղաքակրթութեան և յառաջադիմութեան նպաստաւոր ներգործութեամբ կարող են չէզոքանալ և դադարել առաջնակարգ դեր խաղալէ։

Այս ուղղութեամբ և այս ոգով կ'ընթանար վերանորոգիչներու մտածողութիւնն ու գործնական քայլերը։

Այսպէս՝ Թիւրքիոյ պետական և հասարակական կեանքին մէջ նոր սկզբունք առաջացաւ — մ ա հ մ ե դ ա կ ա ն ի և ք ր ի ս տ ո ն է ի հ ա շ տ ո ւ թ ի ւ ն ը խ ն դ ի ր ը։ Սկզբունք, որուն վերապահուած էր խոշոր և նշանակալից դեր օսմանեան երկրին վերակազմութեան գործին մէջ։

Քաղաքացիական յարաբերութիւններու մէջ սկսան նոր անուններ և կոչումներ հրապարակ ելնել։ „Օսմանեան քաղաքացի" որակումը, թէպէտ և վարանոտ կերպարանքով, սկսաւ ներս մտնել քաղաքական կեանքին մէջ։ Պետութիւնը աշխարհականացնելու փորձեր եղան։ Մինչև իսկ ժամանակի կայսրը, Մահմուդ, կը հաւաստեն թէ արտասանած է հետևեալ բնորոշ խօսքերը.

„Այսուհետև ես չեմ ուզեր ճանաչեր մահմեդականը ուրիշ այլ տեղ, բայց եթէ մզկիթին մէջ, քրիստոնիան՝ եկեղեցիին մէջ, հրէան՝ սինագոգին մէջ"։ („La Turquie et le tanzimat")։ Այս վճռական և համարձակ խօսքերը, նոր ժամանակներու այդ իմաստուն սկզբունքը հրահանգիչ է Թիւրքական վերածնունդի առաջին օրերուն։ Եւրոպական քաղաքակրթութեան որդեգրութիւնը Թիւրքիոյ համար բացարձակ հրամայական մըն էր։ Ժողովուրդներու համահաւասար քաղաքացիութիւնը, քրիստոնէի և մահմեդականի հ ա շ տ ո ւ թ ի ւ ն ը այդ երկրի համար առաջին անհրաժեշտութիւնն էր։ Առանց այդ հաշտութեան անմտաբելի էր պետութեան աշխարհականացման և եւրոպականացման գաղափարը։

1830 թուականին զօրավար Խալիլ փաշան Ռուսաստանից դառնալով՝ հետևեալ ոչ-նուազ նշանակալից խօսքերը կ'արտասանէր. „Ես կը վերադառնամ աւելի համոզուած, քան երբևիցէ, որ եթէ մենք չշտապենք նմանիլ Եւրոպային՝ հարկադրուած պիտի ըլլանք դէպի Ասիա յետ գնալ"...

Ժամանակի ընթացքին մէջ այս գաղափարներն ու տրամադրութիւնները աւելի ու աւելի ծաւալեցան։ Օսմանեան երկրի կառավարական շրջանները տեսան, որ պետութեան միակ փրկութիւնը վերակազմութեան և նորագոյն հիմնարկութիւններու մէջ կը կայանայ։ Համակերպման և յարմարման անհրաժեշտութիւնը կը տնկուէր ամենուն առաջ բոլորովին բացայայտ և անողոքմ կերպարանքով։ Խնդիրը աւելի քան կենսական էր. ինքնապահպանութեան, գոյութեան հարց էր գերազանցապէս։ Կրօնական-բարոյական նկատումներն ու տարտամ վարդապետութիւնները հարկադրուած տեղի պիտի տային աւելի արմատական և աւելի հրամայական մտահոգութեան մը հանդէպ։ Աբդիւլ-Մէջիդի թագաւորութեան և Ռէշիդ փաշայի վարչապետութեան օրերուն վերանորոգութեան խնդիրը համեմատաբար աւելի որոշ ձևով հրապարակ եկաւ։ 1839 թուականի Նոյեմբեր 3-ը ռէֆորմներու և քաղաքական ազատութիւններու սկիզբն եղաւ։ Գիւլ-Հանէի ակտը օսմանեան պատմութեան մէջ նոր շրջան բանալու հանգամանքն ունի։ Առաջին անգամ գահոյքի բարձրութենէն նոր սկզբունքներու ճառագովութիւնը լսեցաւ։ Հանդիսաւոր պարագաներու մէջ կրօնքի և դաւանանքի խնդիրը պետական-քաղաքական կեանքէն հեռացնելու փորձեր եղան։ Եւ ատոր փոխարէն քաղաքացիական իրաւունքները անխտրականօրէն խոստովանուեցան ամեն անհատներուն։

„Այսուհետև ազգային հիմնարկութիւնները պէտք է երաշխաւորեն մեր բոլոր հպատակներուն կատարեալ ապահովութիւն՝ անոնց կեանքի, պատուի և գոյքի վերաբերեալ։ Այս շնորհները պէտք է անցնեն ամենուն, ինչ կրօնքի և հաւատքի ալ պատկանին. ամենքը պիտի վայելեն առանց բացառութեան"։

Դժբախտաբար դիւրին չէր միանգամ ընդմիշտ իրագործել կեանքին մէջ այն, ինչ կը ճանաչէին բառերով։ Հին Թիւրքիան տակաւին կանգուն էր և առիթներ կը փնտրէր դիմադրելու բարենորոգիչներուն։ Եւրոպական հաստատութիւններու գիտակցական և անգիտակից հակառակորդները—մղուած մասամբ կրօնական, մասամբ տնտեսական-դասակարգային նկատումներով—կապրէին և կը գործէին Թիւրքիոյ ամբողջ տարածութեան վրայ։ Կառավարական ծրագիրները պաշտպանութիւն չէին գտներ անգամ ժողովրդական այն խաւերուն կողմէն, որոնց շահերուն հակառակ չէր պետութեան վերակազմութիւնը։

Ներքին՝ մասամբ գործօն, մասամբ կրաւորական դիմադրութիւնը աւելի շեշտուեցաւ արտաքին դաւերու հետևանքով։

Եթէ մէկ կողմէ եւրոպական մեծ պետութիւններէն Անգլիան և Ֆրանսիան քիչ շատ կը քաջալերէին Թիւրքիոյ վերանորոգութեան հեղինակները, եթէ այդ երկու երկրներու պատմութիւնն ու քաղաքական-իրաւական

վարչակարգերը դաս կը ծառայէին Թիւրքիոյ պետական յառաջադէմ մարդերուն — միւս կողմէ տխրահռչակ Մետերնիխ եռանդուն դաւեր կը նիւթէր վերածնող Թիւրքիոյ դէմ։

Դժգոհ, որ օսմանեան հինաւուրց պետութիւնը իր վերանորոգութեան ներշնչումները կը ստանար ֆրանսական հիմնարկութիւններէն և ոգիէն՝ Աստրիոյ այդ յետադէմ ու դիւական վարիչը հետևեալ խորհուրդները կը յղէր Բարձրագոյն Դրան. „Թիւրքիոյ անկման բոլոր պատճառներէն ան, որ լրացուց չարիքներու աղբիւրը՝ եւրոպական ձևի ռէֆորմներու միտքն էր... Հիմնարկեցէք ձեր կառավարութիւնը ձեր կրօնական հիմնարկութիւններու յարգանքին վրայ... Փոխ մի առնէք եւրոպական քաղաքակրթութենէն այն հիմնարկութիւնները, որոնք ձերինին յարմար չեն... Մնայէք թիւրք. հետևեցէք մուսուլման օրէնքին. գնացէք ուղիղ՝ առանց կարևորութիւն տալու արևմուտքի հասարակական ձայնին. մի նմանէք այն պետութիւններուն, որոնց հիմնական օրէնսդրութիւնը արևելքի բարքերուն հակառակ է. պաշտպանեցէք այն վերանորոգութիւններու, ռէֆորմներու դէմ, որոնք կրնան քայքայել միայն ձեր երկիրը“...

Այս չարամիտ խորհուրդները այն նպատակով չեն անշուշտ, որ վերակազմութեան ժամանակ ի նկատ առնին Թիւրք երկրի և ժողովրդի ներքին պայմանները, այլ միմիայն անոր համար, որ ամեն կերպ խանգարի Թիւրք պետութեան վերածնունդը և ապահովի անոր կորուստը։

Այս կէտը ևս չափազանց կարևոր է և ուշադրութեան արժանի։ Արտաքին ոտնձգութիւններու դժբախտ պատմութիւնն է ատիկա, որ տակաւին իր ոյժին մէջն է և կը գործէ մինչև այսօր...

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Պարզ ու ցայտուն աչքի են զարնուում օրէնսդրական այդ ընտրութիւնների մէջ՝ երկու խոշոր իրողութիւն. յետադիմական բանակի վարէլքը և սոցիալիզմի վերելքը։

Զուր, անօգուտ ճիգեր են թափում Ֆրանսիայի պահպանողականները. միապետութիւնը էլ չի վերադառնայ, որովհետև նրա անհաշտ հակոտնեայն՝ հասարակապետութիւնը, ժողովրդական գերիշխանութիւնը 40 տարուց ի վեր բաւական արդէն ուժեղացած է, կանգնած ամուր, անսասան պատուանդանի վրայ։ Վերջին ընտրութիւնները գրեթէ մահացու հարուած տուին աջակողմեան բէակցիային, որից մնում են այժմ միայն խղճուկ բեկորներ։

Հանրապետական գաղափարը աւելի քան երբևիցէ, շեշտուեց ուժեղ և տիրական։ Ո՞վ է սակայն իսկական յաղթանակողը հանրապետական լայնածաւալ բանակի մէջ։ Դա նրա ծայրաձախակողմեան թևն է—սոցիալիստականը։ Սոցիալիստ պատգամաւորների թիւը աճում է ամբողջ 23-ով։ Սոցիալիստ ընտրողների թիւը ամբողջ երկրի մէջ բարձրանում է 800,000-ից՝ մէկ միլիոն և երկու հարիւր հազարի։

Թուերը, իրենց չոր, ահաւոր լեզուով իրաւացի անհանգստութիւն են պատճառում փողի և առանձնաշնորհումի դասակարգերին։ Սոցիալիզմը անդիմադրելի և յարաժամ վերելքի մէջ է—ահա ներկայի մեծ իրողութիւնը։ Նա աճում է, թէ քաղաքներում, թէ գաւառներում, ի հաշիւ բուրժուա-արմատական կուսակցութիւնների, բադիկալների, բադիկալ-սոցիալիստների և անկախ-սոցիալիստների, որոնք բոլորն էլ ներկելով իրենց հաւատամքն ու ծրագիրը սոցիալիզմի գունաւորութեամբ, կարծում էին միանգամ ընդմիշտ գրաւել ժողովրդային զանգուածներին և տիրել ասպարէզին։ Այդ զանգուածները վաղ թէ ուշ ըմբռնում են ծրագրային երկդիմութիւնը և տալիս են իրենց քուէն այն մարդկանց, որոնք առաջադրում են յստակ, որոշ աշխարհահայեացքի հետ՝ նաև յստակ ծրագիր։

Արմատականները և արմատական սոցիալիստները, որ կազմում են այժմեան ֆրանսիական պարլամենտի տիրապետող մեծամասնութիւնը, խիստ զգալի կորուստներ ունեցան։ Ընկաւ և „անկախ-սոցիալիստների“ հատուածը, որի առաջնորդներն են սոցիալիզմի բենեգատներ (ուխտադրուժ) Միլլերան և Բրիան։ Նրանց թիւը կիսով չափ նուազեց, հասաւ ընդամենը մի տաս հոգու։

Այն ինչ իսկական, միացեալ սոցիալիստների քանակը պարլամենտի մէջ բարձրացաւ 76-ի։ Այդ թուի մէջ չը մնացին, տարաբախտաբար, մի քանի նախկին պատգամաւորներ — հինաւուրց սոց.-յեղափոխական Ալլման, Ալէքսանդր Վարենն և մեր սիրելի Պրեսսանսէն, որ Պատգամաւորական Ժողովի զարդն էր իր եզակի էրուդիցիայով արտաքին-քաղաքական կնճիռների մէջ։ Մխիթարենք գէթ նրանով, որ պարլամենտական ամբիոնից առժամապէս հեռանալով այդ ականաւոր գործիչը պիտի նուիրուի ամբողջապէս, իր ուժեղ ու բեղուն գրչով, հրապարակախօսութեան, ուր նա երեսուն տարուց ի վեր հնձել է այնքան դափնիներ, կանգնած միշտ իր կոչման բարձրութեան վրայ, իբրև ճնշուած ժողովուրդների և բոլոր ազնիւ դատերի պաշտպան։

Ֆրանսիս դը Պրեսսանսէ, որ 8 տարուց ի վեր անդամ էր պարլամենտի, մէկն էր այն սակաւաթիւ սոցիալիստ պատգամաւորներից, որոնք ընտրուում են միայն ու միայն պրոլետարական քուէներով, առանց ուրիշ խառնուրդների։ Այս անգամ Լիոնի ընտրութիւններին՝ նրա հակառակորդը, մի անյայտ միջակութիւն, շնորհիւ մի շարք բթացուցիչ ազդեցութիւնների, կարողացաւ յաղթանակել, ընդամենը մի քանի հարիւր ձայնի առաւելութեամբ։

Բուրժուա-պահպանողական հատուածները ձեռք ձեռքի տուած ամեն ճիգ թափեցին՝ տապալելու և մի այլ նշանաւոր սոցիալիստի — Ժորէսի։ Մի վայրկեան կար, երբ ամբողջ սոցիալիստ ու ռամկավարական աշխարհը անձկութեամբ սպասում էր Տարն գաւառի ընտրութեան ելքին, վախենալով, մի գուցէ Ժորէսն իրօք տապալի և ֆրանսիական պարլամենտը նորէն ամբողջ 4 տարով զրկի իր առաջին հռետորից, իր ամենաուժեղ դէմքից։ Բարեբախտաբար, այդ երկիւղը շուտով փարատուեց, բէակցիայի բոլոր ջանքերն ի դերև ելան և Ժորէսը վերընտրուեց։

***

Չափազանց մխիթարական է Ֆրանսիայի քաղաքական-

հասարակական էվոլիւցիան։ Մի կողմից հակահանրապետական տարրերի չքացում, միւս կողմից՝ հանրապետական անիւի ձախացում...

Ոստիւնների, հակասական թռիչքների կլասսիկ հայրենիքը կարծես արդէն գտել է իր նորմալ, բնականոն առաջադիմութեան աւազանը և չը նայած անդադրում յետադիմական ինտրիգներին, չը նայած մանաւանդ կղերական հսկայ բանակի ամենօրեայ վայնասունին — ըէժիմը ամուր ու անսայթաք զարգանում է ու կատարելագործւում Միրաբօների ու Գամբետտաների տուած ուղղութեամբ և վերջին տարիներս նա տուեց իր կենսունակութեան ու ժողովրդականութեան փայլուն ապացոյցներ, ձեռնարկելով մի շարք խոշոր քաղաքական և սօցիալական բարենորոգումների։ Կատարուեց պետութեան ու եկեղեցու բաժանումը, որ ինքնին մեծ, խորունկ մի յեղաշրջումն էր, հարուստ ու արգասաւոր՝ իր հետևանքներով ու հեռաւոր անդրադարձումներով։ Ֆրանսիական ազգի ահագին մեծամասնութիւնը հանդէս եկաւ աշխարհի առաջ, որպէս միանգամայն ազատուած ոչ միայն կղերական համաշխարհային պատուհասից, այլև կրօնական բիրտ նախապաշարումներից, որոնց տակ տնքում են արևմտեան ուրիշ ժողովուրդներ։ Ֆրանսիական մտաւորականութիւնը մասնաւորապէս յայտնուեց իբրև արժանաւոր ժառանգ 1789—93-ի մեծ պապերի — շատ աւելի առաջադէմ ու լուսամիտ, քան միւս խոշոր հասարակապետութեան - Հիւսիսային Ամերիկայի — մտաւորականութիւնը, որ նոյնպէս վաղուց ի վեր կատարել է եկեղեցու և պետութեան ապահարզանը։

Երրորդ հանրապետութիւնը ի կատար ածեց և մի այլ ըէֆորմ — սօցիալական բնոյթ ունեցող — որ արժանի է ուշադրութեան։ Ֆրանսիան առհասարակ բաւական աղքատ է զուտ սօցիալական կամ աշխատաւորական ըէֆորմներով։ Հարաւան միապետութիւնները, Գերմանիան և Անգլիան, որոշ խնդիրներում շատ աւելի առաջ են գնացել։ Աշխատաւորական ապահովագրութեան (assurance) հարցը ընդհանուր առմամբ շատ աւելի լայն չափերով է իրագործուած Գերմանիայում։

Այժմ ահա հանրապետական ռէժիմը ձգտում է լրացնել նաև այդ խոշոր պակասը և պարլամենտը փակուելուց առաջ քուէարկեց ահագին մեծամասնութեամբ ծերունիների թոշակի ըէֆորմը — մի օրէնք, որ շատ երկչոտ ու պակասաւոր է, բայց որ ինքնին մի լուրջ սկզբնաւորութիւն է, ենթակայ հեռաւոր լրացումների ու կատարելագործումների։ Ծերունիներին, աշխատանքի անընդունակներին տրուած օգնութիւնը մինչև օրս սոսկ բարեգործական բնոյթ ունէր։ Այսուհետև նա դառնում է օրէնք։ այսուհետև ազգը ճանաչում է աշխատաւոր մարդու վերաբերմամբ իրաւունք՝ ստանալու իր ծերութեան տարիներում հաւաքական ազգային բարիքներից իր բաժինը, որին նա արժանացել է երկարատև ու քրտնաթոր աշխատանքով... Ահա մի մեծ սկզբունք, որ պէտք է արծարծել ամենուրեք, նաև մեր յետամնաց երկրներում։ Ֆրանսիացի աշխատաւորը — քաղաքային պրոլետարիատ, գիւղացի, արհեստաւոր — բոլորելով իր 65 տարին, այսուհետև կունենայ որոշ թոշակ, առայժմ շատ լղարիկ, անտարակոյս, բայց նա կ'աճի աստիճանաբար պետութեան ու մանաւանդ ծերակոյտի աստիճանական ռամկավարացման հետ... Առայժմ վաստակաւոր ծերունին կունենայ այնքան, որ ազատ մնայ սև օրերից, որ ստիպուած չը լինի ձեռք երկնցնել՝ ողորմութիւն հայցելու։ Եւ այդ թոշակները պիտի կազմին թէ իրենց աշխատաւորների, թէ գործատէր արդիւնաբերողների և թէ պետութեան ամենամեայ վճարներից։

Այդ համակրելի օրէնքը տապալելու համար՝ միահամուռ ճիգ թափեցին մի կողմից յետադիմականները, միւս կողմից յեղափոխական սինդիկալիստներն ու մարքսիստական աղանդաւորները։ Վերջինների պարագլուխը, Ժիւլ Գեդ, այնքան հեռու գնաց, որ նոյնիսկ խախտեց կուսակցական համագումարի վճիռը և ըէֆորմի քուէարկման օրը մէկէն ի մէկ բեմ բարձրացաւ ու խօսեց նոր օրէնքի դէմ, հուչակելով այն, որպէս թալան աշխատաւոր դասակարգի։ Հին գործիչի այդ յանկարծակի թատերամուտը այդքան արտառոց մի դիտաւորութեամբ՝ շարժումն պատճառեց սօցիալիստների շարքերի մէջ, ևս առաւել, որ Գեդը իր այդ դիտաւորութեան առթիւ հարկ չէր սեպել նախօրօք գէթ խորհրդակցելու իր ընկերների հետ... Բայց պապական այդ ձևերին վաղուց հետէ ընտելացած է ֆրանսիական ուղղափառ մարքսիստների առաջնորդը, որ ամեն առթիւ ձգտում է արգելքներ ստեղծել ժօրէսեանների բարենորոգչական քայլերի առջև, համարելով իրան, որպէս միակ ու ճշմարիտ թարգման ֆրանսիական աշխատաւորութեան շահերի։

Սօցիալիստական հատուածը, ի հարկէ, ականջ չը կախեց աղանդաւոր վետերանի այդ անակնկալ յայտարարութեանը և ուրիշ դեմօկրատ տարրերի հետ միաձայն քուէարկեց օրէնքը։ Մի անգամ ևս Ֆրանսիայի սօցիալիստներն ու աշխատաւորութիւնը հանդիսաւոր հրաժարիմք ասացին ուղղափառ ու ամուլ դոքտրինեօրութեան և գնաց Ժօրէսի ետևից։

Սօցիալական կամ աշխատաւորական օրէնսդրութիւնը, որի այդ խոշոր ակտը կատարուեց շնորհիւ սօցիալիզմի յարաճուն ազդեցութեան, այսուհետև, բնականաբար, առաջ կերթայ աւելի արագ և աջող, քանի որ սօցիալիստական թևը պարլամենտի մէջ ներկայացնում է 76 հոգու մի պատկառելի ուժ։

Միւս կողմից, իրենք բուրժուա-արմատական ու դեմօկրատ կուսակցութիւնները ևս — եթէ չեն ուզում կորցնել հողը իրենց ոտքերի տակ, կորցնել իրենց ազդեցութիւնը ժողովրդային զանգուածների մէջ — պէտք է հետզհետէ ձախանան արհրաժեշտաբար, պէտք է ձայնակցեն սօցիալիստներին, պէտք է գրկեն հետզհետէ լայն, արմատական և բարենորոգչական գործունէութեան դրօշը։

Սակայն, ոչ ոք չի կարող ստանձնել գուշակի դերը հասարակական զարգացման դիմաց։ Հնարաւոր է, որ տեղի ունենայ տրամագծօրէն հակառակ շարժումը։ Հնարաւոր է, որ բուրժուական բոլոր հատուածները, անգամ ամենառամկավարականները, սօցիալիզմի ու աշխատաւոր ընդհանրութեան այդ յարաճուն գրոհի դիմաց՝ փոխեն ֆրոնտը դէպի յետ, փարին սօցիալական ըէակցիային, միանան՝ „սրբազնագոյն սեփականութիւնը“ փրկելու համար, „կարմիր ուրուականը“ հալածելու համար...

Առայժմ Ֆրանսիայի զարգացման անիւը, նրա էվոլիւցիայի ընդհանուր ձգտումը միանգամայն յուսալի ճամբու վրայ է և մենք սրտանց ողջունում ենք այն։

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ԳԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՏԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ

(Մեր աշխարհահայեացքի հիմքերը)

II

Մենք տեսանք, թէ որքան խոր արմատներ ունի մարդկութեան մէջ, մանաւանդ նախնի ժամանակներում, համայնականութեան ու հաւասարութեան գաւանանքը։ Հարկ է փոքր ինչ աւելի ծանրանալ այդ ուշագրաւ իրողութիւնների վրայ, որ մի տեսակ սեւագիր պատճէն են գալոց մարդկութեան հասարակակենցաղի և որոնց մնացորդները այնքան առատութեամբ ցանուած են այժմեան աշխարհում, նաև մեր երկրում։

Այդ նախնական համայնականութեան գաւանանքը միանգամայն բնազդային էր, ինքնածին և շատ դէպքերում ուղղակի սրտառուչ։

Մասնաւոր կամ անհատական սեփականութիւնը չէր ճանաչւում այդ վայրենի ու բարբարոս համայնքների մէջ։ Չէր ճանաչւում այն պատճառով, որ նա, վայրենին, նախամարդը չունէր տակաւին իր անհատականութեան գիտակցութիւնը, նա գոյութիւն ունէր, այսպէս ասած, միայն համայնքի մէջ և միայն նրա զօրութեամբ, որպէս հօտի, երամի անբաժանելի մի անդամ, մի մասնիկ... Համայնքից դուրս՝ նա ոչինչ էր, կորած, դժբախտ։

Իսկ համայնքը սերտ, արիւնակից գերդաստանի բնոյթ ունէր, համայնքը բոլորի համար մի տեսակ հարազատ, խնամատար ու սնուցիչ մայր էր, որից բաժանելով, անհատները լքւում ու չորանում էին, որպէս ծառից կտրուած ճիւղեր։ Կղզիացած կեանքը մահ էր վաղեմի մարդկանց համար, այնքա՜ն շատ էին վտանգները, նրանց շրջապատող... Վտանգներ՝ թէ իրական, թէ երևակայական։ Եւ այդ հեռաւոր ժամանակներում, հօրդայից, տոհմից, գենսից, համայնքից արտաքսուիլը համահաւասար էր մահուան պատժի։ Նախապատմական յոյների ու սեմիտների մօտ սովորութիւն էր՝ դուրս վտարել համայնքից այն անհատներին, որոնք սպանում էին նոյն հարազատ համայնքի որևէ անդամին *)։ Օրեստը իր մօր և Կայէնն իր եղբօր սպանելուց յետոյ՝ հարկադրուած էին թողնել երկիրը, փախչել։

Բայց վտարման կամ աքսորի սովորութիւնը յարատևեց յոյների մօտ և աւելի ուշ, պատմական, քաղաքակրթական ժամանակներում. աքսորը հարազատ տոհմից, համայնքից դեռ դիտւում էր, որպէս ամենաահաւորը բոլոր պատիժներից։ „Աքսորականը, ասում է յոյն բանաստեղծ Թէօգնիս, չունի հաւատարիմ բարեկամներ և ընկերներ և դա ամենադաժան բանն է աքսորի մէջ“։

Համայնքը սուրբ էր, նուիրական։ Նոյն սրբութեան հանգամանքն ունէին համայնքները՝ և քաղաքակրթութեան հորիզոններում, գրեթէ բոլոր ազգերի մէջ։ *Communitas* (Հռոմում), *Gemeinde, Markgenossenschaft* (Գերմանիայում), *commune* (Ֆրանսիայում), *township* (անգլօսաքսօն երկրներում, մասնաւորապէս Ամերիկայում), „միր“ կամ օբշչինա (Ռուսաստանում), համայնք, մեզնում, — բոլորն էլ նոյնիմաստ բառեր ու գաղափարներ են, ամեն տեղ այդ գաղափարը հանդիսանում է ժողովուրդների աչքում, որպէս գերագոյնը սրբութիւններից, ամեն տեղ համայնքն օժտուած է հզօր իշխանութեան ատրիբուտներով, ստորոգելիներով, ամեն տեղ նա պահպանում է իր անդամներին՝ իր բացարձակ խնամակալութեան, կարելի է ասել, բռնութեան տակ, պատժում է և մահացնում իրապէս կամ բարոյապէս իր դէմ մեղանչողներին, ըմբոստներին, դաւաճաններին։

Հռչակաւոր սոցիոլոգ Հաքստհաուզէն յիշատակում է մի շարք ռուսական առածներ, որոնք պերճախօս կերպով վկայում են այն խոր յարգանքը, որ „միրը“ (ռուսական համայնքը) ներշնչում է ժողովրդին։ „Աստուածն է միայն միրի դատաւորը“, „միրի կամքը սուրբ է, պէտք է անպայման կատարւի“, „միրի հառաչանքը կարող է ժայռ խորտակել“, „միրը երկրի պատուարն է“ և այլն *)։ Նման յարգանքի ու ակնածութեան արտայայտութիւններ „համայնքի“ վերաբերմամբ կան բոլոր երկրներում, նաև մեզ մօտ. չենք յիշում, տարաբախտաբար։

Համայնքն ամեն բան է, նա և միակ սեփականատէրն է։ Նախնի մարդկութեան մէջ դա բնական է և տրամաբանական։ Կանայք անգամ, երեխաներն անգամ համայնքին են, գենսին են, տոհմին են։ Ամեն բան նրան է պատկանում, անհատը ջնջւում է։ Ահա օրինակներ նոյնիսկ այժմեան վայրենիների կեանքից. ահա Բուշմէններն ու Ֆուէջիները, մի մի նմուշներ այդ նախնական կոմմունիզմի, այդ ուշագրաւ համայնականութեան։ Դարվին տեսնում է իր աշխարհաշրջիկ ճամբորդութեան միջոցին, թէ ինչպէս մի Ֆուէջի պատառ-պատառ բաժանում է իրեն տրուած վերմակը, բաժանում է այնքան մասերի, որքան նա ունէր ընկերներ։ Նոյնպէս և որսի արդիւնքը—թէկուզ ստացուած մէկ կամ մի քանի անհատների ձեռքով—չի պատկանում այդ անհատներին, այլ ամբողջ հաւաքականութեան, ամբողջ՝ հօրդային կամ համայնքին։ Որսորդութիւնն ու ձկնորսութիւնը, նոխնական արդիւնաբերութեան այդ երկու ճիւղը, կատարւում էին սովորաբար միասին և արդիւնքները սպառում էին միասին։ Մեր „մատաղահացերն“ ու քելեխային բանկետները ոչ այլ ինչ են, բայց եթէ մնացորդ այդ հնադարեան, կոմմունիստական սովորութիւններից։

Այդպէս ուրեմն, մասնաւոր սեփականութիւնը—որ այսօր շատ շատերին, մանաւանդ իշխող դասակարգերի ներկայացուցիչներին, թւում է որպէս յաւիտենական, բնատուր մի հաստատութիւն, յատուկ բոլոր ժամանակներին և բոլոր մարդկային հատուածներին—ծնունդ է առել համեմատաբար աւելի ուշ, նախապատմութեան կամ պատմութեան որոշ վայրկեաններում, իբրև հետևանք մի շարք տնտեսական ու սոցիալական պատ-

*) *Lafargue: La propriété, Origine et Evolution.*

*) *Emile de Laveley: De la propriété et de ses formes primitives.*

ճառների, որոնց մասին դեռ առիթ կունենանք խօսելու։

„Բնաւուրը“, սկզբնականը — Հ ա մ ա յ ն ա կ ա ն սեփականութիւնն էր, կամ ուրիշ խօսքով, սեփականութեան ժխտումը։ Երկար դարեր մարդ-էակները և հասարակութիւնները բնազդօրէն թշնամի են եղել „իմի“ ու „քոնի“ հասկացողութեան, խորութեան։ Աստուածը կամ աստուածները, նրանց նախնական ըմբռնումով, ստեղծել են ամեն բան՝ ամենքի համար, աշխարհի բոլոր բարիքները — ընդհանուր, համայնական բարօրութեան համար։ Ամերիկեան հնդիկների հասկացողութեամբ Մեծ ոգին (իրենց աստուածը) բնակեցրել է երկիրը, և լցրել է անտառները որսի կենդանիներով — ոչ թէ մի քանի արտօնեալների, այլ անխտիր բոլորի համար։ Այն ամենը, ինչ բանում է դաշտերի մէջ, այն ամենը, ինչ որ ապրում, շնչում է երկրի վրայ և գետերի ու ծովերի մէջ—հաւասարապէս պատկանում է բոլոր մարդկանց, որոնք արարչագործութեան գերագոյն արգասիքն են, աշխարհի, բնութեան տէրերը։

Այդ պարզ ու հրապուրիչ աշխարհահայեացքից տրամաբանօրէն հետևում էր նախնական ամենամեծ առաքինութիւններից մինը — հ ի ւ ր ը ն կ ա լ ո ւ թ ի ւ ն ը։ Ո՞վ չը գիտէ, որ հին, բարի ժամանակների այդ գեղեցիկ ժառանգութիւնը պահպանել է այսօր միայն յետամնաց, կիսակուլտուրական ու վայրենի ժողովուրդների մէջ, և որ անհատապաշտ քաղաքակրթութիւնը գնալով, միշտ աւելի և աւելի դուրս է մղում այն։ Եւրոպայում նա գրեթէ իսպառ չքացել է։

Ամեն բան—ամենքին էր, հ ա մ ա յ ն ք ի ն էր։ Եւ այդ „Ամենք“ կամ „Համայնք“ հասկացողութիւնը երբեմն տարածւում էր բովանդակ մարդկութեան վրայ. բ ո լ ո ր մարդիկ իրաւունք ունէին մի համայքի հիւրընկալութիւնը վայելելու։ Հ ի ւ ր ը նոյնպէս Աստուծուն էր, Մեծ Ոգուն էր։ Օտարականին օգնելը՝ ստիպողական պարտք էր համայնքի իւրաքանչիւր տնտգամի համար։ Այդպէս՝ և մեր նահապետական երկրներում, տնտգամ կիսավայրենի հօրդաների մէջ (կովկասեան լեռնաստանում և առաջկաց Քիւրդիստանում)։ Լ.ւ ամենից ուշագրաւն այն է, որ հ ի ւ ր ը ապաստանում և մեծարւում է անգամ այն դէպքում, երբ նա պատկանում է թշնամի ցեղի։

Երբէք —իրաւամբ ասում է Լաֆարգ—հասարակական զարգացման ոչ մի շրջանում հիւրընկալութիւնը չի գործագրւել այնքան պարզ, այնքան լայն ու կատարեալ ձևով։ Երբ ամերիկական վայրենի ի ր օ կ ե զ ի տունը մտնում է մի մարդ—ասում է Մօրգան — ով որ էլ լինի նա, տնեցիների կանանց պարտքն է՝ կերակրել նրան։ Հակառակ դէպքում այդ տունը կ'անարգէ ինքզինքը և ամբողջ ցեղը։ Հ ի ւ ր ը սուրբ է, նոյնիսկ երբ նա թշնամի է... Այդ բարքերը, ըստ Տացիտի վկայութեան եղել են և հին, բարբարոս գերմանների մէջ։ Այնտեղ ևս օտարականին հարազատ օճախից յետ մղելը համարւում էր ոճիր... Պատահել է այդ նահապետական կոմմունիզմի շրջանում, որ տեղ-տեղ գիւղական համայնքները իրենց արամադրելի հողերից մի յայտնի բաժին յատկացրել են օտարականներին. նրանց արդիւնքներով կերակրւել են պատահական հիւրերը։ Եղել է նոյնիսկ այդ հողերի վրայ յատուկ տուն օտարականների համար — հ ի ւ ր ե ր ի տ ո ւ ն ը։ Նման փաստեր պատմում են Հնդկաստանի ու այլ համայնական գիւղերի, և նոյնիսկ 19-րդ դարասկզբի Ֆրանսիական որոշ համայնքների վերաբերմամբ (Օվերն և Մորվան գաւառներում)։

Դարձեալ, ուրեմն, նախնական կոմմունիզմի, համայնականութեան մի նմուշ, որ յայտարար է և նախնական հ ա ւ ա ս ա ր ո ւ թ ե ա ն...

Արդարև։ Հին հասարակութիւնների մէջ հողերի ու գործիքների, աշխատանքի ու վայելքի հ ա մ ա յ ն ա ց մ ա ն հետ տիրում էր բնականաբար կատարեալ հաւասարութիւն մարդկանց միջև։ Զարգանում էր այդ նահապետական համայնքների ծոցում ճշմարիտ եղբայրութեան ոգի, փոխադարձ կարեկցութիւն ու աջակցութիւն,—երևոյթներ, որ այնքան սակաւացել են, գրեթէ չնչւել ներկայ կապիտալիստական դարաշրջանում, քրիստոնէական լոզունգների ժխորի մէջ...

Սպենսեր իր „Սոցիոլոգիայի հիմունքների“ մէջ ներբող է կարդում այդ հինաւուրց փոքրիկ հասարակութիւններին, նրանց բնածին ալտրուիզմին, վեհանձնութեանն և համերաշխութեանը. և բոլոր նրանք, որոնք տեսել են Աֆրիկայի ու Ամերիկայի վայրենի համայնքները, նախքան եւրոպական քաղաքակրթութեան, քրիստոնէութեան ու ալքօհոլի մուտք գործելը,—բոլորն էլ ոգևորւած շեշտում են նրանց համայնական առաքինութիւնները։

Ե՞րբ է սկզբնաւորւել կոմմունիստական հաւասարութեան այդ բէժիմը, քանի՞ դարեր է տևել նա... Ի՞նչ կարող ենք ասել... Յամենայն դէպս պատմութիւնը վկայում է, որ անգամ քաղաքակրթութեան համեմատաբար բարձր աստիճանների վրայ այդ համայնքները— *Markgenossenschaft*, գերմանիայում, *township*, ամերիկայում, *commune*-ները, Ֆրանսիայում և այլն — չը նայած իրենց խաշոր շեղումներին սկզբնական կերպարանքից, չը նայած մասնաւոր սեփականութեան սկզբունքի նուաճումներին, պահպանում են իրենց էական բնոյթը, պահպանում են ռ ա մ կ ա վ ա ր ա կ ա ն հ ա ւ ա ս ա ր ո ւ թ ի ւ ն ը. նրանք բոլորն էլ անկախ, ինքնավար միութիւններ են, վարչական ապակենտրօնացմամբ, լուծում են իրենց ներքին վէճերը համագումարներով, պատգամաւորութիւններով ու մեծամասնութեան սիստեմով, նրանց բոլորի մէջ տիրում է կենցաղի, գոյքի, պայմանների հաւասարութիւն և արդիւնաբերութեան մեծագոյն միջոցը, հ ո ղ ը, իր պարբերական բաժանումների սկզբունքով, կազմում է ամենուրեք ընդհանուր, համայնական սեփականութիւն։

Դրանք նախնական պարզ ռամկավարութիւններն են (*démocratie*), որ փլել են ժամանակի յեղաշրջող ալիքների մէջ և որոնցից պահւել են այսօր մի քանի հրապուրիչ ու պանծալի մնացորդներ՝ Ալպեան ազատ բարձունքներում, աշխարհի ամենահին հանրապետութեան մէջ—Շ վ է յ ց ա ր ի ա յ ում (*Landsgemeinde*-ները կամ գիւղական համայնքները Ապպենցելի և մի երկու ուրիշ կանտոններում)։

Հին համայնքը չէր կարող թոյլ տալ գոյքերի կենտրօնացումն փոքրաթիւ ձեռքերի մէջ, չէր կարող ծնունդ տալ առանձնաշնորհման ու ճնշման։ Հողի ընդհանուր սեփականութիւնը ինքնին արդէն մի ամուր պատուան-

դան էր, որ պահպանում էր պայմանների հաւասարութիւնը, սահմանում էր սերտ, համերաշխ կենակցութիւն համայնքի անդամների մէջ, ապահովում էր բոլորի անհատական անկախութիւնը՝ ընդհանուր, հաւասարական սեփականատիրութեան մէջ։

Եւ ամեն տեղ, այնուամենայնիւ, պատմութեան սարսափելի անիւը կոխկռտեց „հին բարի ժամանակների“ այդ աքանչելի առաքինութիւնները, գրեթէ ամեն տեղ անհետացաւ կամաց-կամաց այդ նախնական հաւասարութիւնն ու ռամկավարութիւնը... Առաջ եկաւ գոռոզ, ճնշող արիստոկրատիան, հողային ազնւականութիւնը գրեթէ բոլոր երկրներում, հաստատուեց աւատապետական կարգուսարքը իր համասփիւռ քաօսով, անիշխանական զարհուրանքներով, ապա քաօսից հետզհետէ ծնունդ առաւ մի ապետութիւնը, աւելի գոռոզ, աւելի ճնշող, թէև աւելի օրինաւոր ու կարգապահ,—և ամեն ինչ նա ենթարկեց իր բացարձակ, միահեծան իշխանութեան...

Անհաւասիկ հասարակական էւոլիւցիայի արիւնոտ սլացքը, որին կը հեռևենք իր բոլոր ուշագրաւ հանգրւանների մէջ...

Ողբալու պէտք չը կայ, ի հարկէ։ Զարգացման անիւը ըստ երևոյթին բացասական, արիւնահեղ այդ ընթացքի մէջ, չը պէտք է ցաւի ու ափսոսանքի ճիչեր յարուցանէ օբ'եկտիվ դիտողի կողմից։ Քաղաքակրթութիւնը կործանեց հինաւուրց ռամկավարութիւնն ու հաւասարութիւնը և բերեց անբաւ արիւն ու զարհուրանք։ Բայց դրա համար չը պէտք է անիծենք քաղաքակրթութիւնը։ Յոռետես սոցիոլոգներ արեցին այդպէս։ Կարդացէք Ռուսսոյին, Կարլայլին, Տօլստոյին։ Լսեցէք նիչչէական թունոտ ու սասանեցուցիչ անէծքները ժամանակակից կուլտուրական արժէքների հասցէին... Մոլորութի՛ւն, անտարակոյս։ Եթէ ճիշտ են ու տեղին են քննադատութիւնները, ապա ճիշտ չէ, տեղին չէ նրանց բոլորի եզրակացութիւնը։

Քաղաքակրթութիւնը պատասխանատու չէ։ Պրոգրէսի, առաջադիմութեան հսկայական սլացքը դատապարտելու չէ պարզ, միամիտ վայնասուններով։ Նախնական վայրենութիւնը մի շարք սիրուն առաքինութիւնների հետ պարփակում էր իր ծոցում և մի շարք սարսափներ։ Վայրենութիւնը, սահմանակից որոճացող անասնութեան, ինքնին արդէն սարսափ է։ Մարդկութիւնը չէր կարող կանգ առնել մանրիկ, խաւար համայնքների այդ առաջին աստիճանի վրայ։ Նա ձգտում էր բնազդօրէն լայնարձակ հորիզոններին, ուր ի վերջոյ պիտի իրագործէ մարդկային իդէալական համայնակենցաղը։

Քաղաքակրթիւնը միայն չի կործանում — նա և շտկում է, վերաշինում է։ Ազնւականութիւնը, տեսանք, չ'ապրեց, չ'ապրեց և միապետութիւնը։ Երկուսն էլ իրենց պաշտօնը կատարելուց յետոյ—պաշտօն դրական և բացասական — իջան բեմից և Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ցնցումների մէջ դարձնուեց ռամկավարութեան նոր հաւատամքը։

Այդ հաւատամքն ևս այսօր ահա հռչակւում է անբաւարար, քանի որ տեղ է իշխանութիւնն ու աշխատանքի վայելքները՝ փողի, կապիտալի հրամանատարներին։ Այդ հաւատամքն ևս կործանելու վրայ է, աւելի ճիշտ, կատարելագործելու, լրացնելու վրայ է։ Սոցիալիզմն է այդ լրացուցիչ ուժը և նա գալիս է ազդարարելու նոր մարդկային համայնակենցաղ, ուր պիտի կրկնւի, վերարտադրւի մեր նկարագրած նախապատմական կոմունիզմը, աւելի բարձր, աւելի պայծառ ու կատարեալ պատկերով։ Նորէն ամեն ինչ — արդիւնագործութեան բոլոր ուժերը, բոլոր միջոցները—պիտի դրւին աշխատաւոր համայնքի ձեռքը, իբրև ընդհանուր, ժողովրդական սեփականութիւն...

Պատմութեան յաւերժական ռիթմը...

Ժամանակակից կապիտալիստական կամ բուրժուական պետութեան ձևը պէտք է կործանւի։ Նա արդէն իսկ կործանւելու վրայ է։ Համաշխարհային աշխատաւորական բանակը նրա դէմ է, որ գրոհ է տալիս յարաժամ և յարաճուն թափերով։

Ազատ ու ինքնավար համայնքների կամ ազգերի դաշնակցութիւն — ահա պետութեան գալոց ձևը։ Ազատ, ինքնավար և ինքնօրէն պետութիւնների դաշնակցութիւն—ահա ձևը գալոց մարդկային, տիեզերական հասարակութեան։

Բայց մենք նորէն պէտք է դառնանք անցեալին։

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Շրջիկ ընկեր Բ. Շ.-ի ձեռքով.—Սամսոն՝ Ռմն 216 դրտ., Զրք 50, Թօմայէ 40, Փերան 54։ Մարզուան՝ Ազնիւ 1080 դրտ., Արտեմ 2160։ Մ.-Ազիզ՝ Գ. Կիւրեղեան 216 դրտ.։ Արարկիր՝ Գ. Զիրաֆեան 540 դրտ., Ս. Երամեան 1296, Մ. Գալստեան 216, Գ. Կիւրեղեան 324, Փ. Գոնտիկեան 108 դրտ.։ Գումար 6300 դրտ.։

Դսեիրէի Ենթակոմիտէն՝

1909 յունիսէն մինչեւ դեկտ.—Հեռեւեալ խմբերէ՝ Անանիս 690 դրտ. ողջ, Կորիւն 200, Զարթիր 164, Երկաթ 310, Նպատակ 157, Ռազմ 21. 20, Եռանդ 50, Յառաջ 440, Ասիս-Ապապայէ հանգանակութիւն 2809. 20 դրտ։ Գումար 4842 եգիպտական դրտ. ողջ։

Աւազան Կոմիտէն՝

Յօգուտ կովկասեան բանտարկեալների 1039 դրտ., 5 փ., նոյն նպատակով Պեսօ խմբից 50 դրտ.։ Գումար 1089 դրտ. 5 փ.։

Վասպի Կոմիտէն՝

1908—1909-ի անդամավճարներ։—Հեռեւեալ խումբերէ՝ Մամիկոնեան 440 դրտ. 20 փարա, Տուրուբերան 278, Բաղբերունեաց 333, Սիւնեաց 320, Սասունեաց 223. 20, Դնունեաց 129. 10, Շիրակ 116, Արարատ 155. 20, Արծրունեաց 652, Խաղդեաց 147, Մասեաց 267. 20, Վասպուրական 283. 20, Խոռխոռունեաց 290. 20, Արծիւ 138. 20, Մոկաց 90. 20, Կովկասեան 21, Վրէժ 34, Երանդ 112։ Ներքին հանգանակութենէ գոյացած 2902, արտաքին հանգանակ. 6480, ուիրատուութենէ 511. 20 դրտ.։ Գումար 13925 դրտ. 30 փարա։

Սեւ-Վիտպ *)՝

Արքակ 110 դրտ., Ժիրայր 460, Վարդ երեք անգամէն 630, Թորգոմ 50, Շահին երեք անգամէն 710. 20, Սարհատ երեք անգամէն 316. 20, կաղ. տուրք Զարեւանդի ենթակոմիտէն 55, թատրոնէն գոյացած շահ՝ Սեւ հողերէն 1754, Ատրուճի հովիտէն 868, Ամերիկաբնակ ձիգմանեան 108. 20, ամերիկաբնակ Վ.-Զորցի գաղութէն 1085, Թաքուլ 5, Փառնակ 20, Առիւծ 25, Սամանտուր 30, Ֆարհատ 30, Կայծակ 30, Թաքուլ 75, Բարուճակ 60, Յովհաննէս Զիլինկիրեան 108. 20, Տարաղոլեան Պետրոս 22, Ֆրդինցի ընկեր մը 10, եւս 5, Յակոբ Փոլիսեան 21, Մասիս 20, Պետրոս Մեսրոպեան 20, Մանուկ 13, Օհան Ֆեճերճեան 10. Մանուկ եւ Պետրոս Մարգանին 19, Յ. Ազատեան 15, Ազատ ազատեան 8, Տօնս 5, Յ. Ազատեան եւս 34, Կիւրունցի ձիճնիգեան 20, Յոյս 20, Յոյսէն նուէր 1 յունական 330 փամփուշտով, եւս 1 պրաունինկ 375 փամփուշտով։

ԶԻՖՕՆԷՆ յունիս-օգոստ.—Հեռեւեալ խմբերէ՝ Հարաճային 100 դրտ., Անդրանիկ 32. 20, Մհիր 150, Ազատ 225, Հրատ 701. 20, Մասուն 55, Հերոս 70, Կոռակ 180 դրտ.։

Կ. ԽԱՉԷՆ յունիս-օգոստ.—Հեռեւեալ խմբերէ՝ Կայծակ 88. 20 դրտ., Ցասմիկ 34. 20, Շանորհրատ 57, Ժխապրիկներ 50, Արուսեակ 66, Շուշանիկ 54, Սօնա 71, Փոքրիկ 55, Մեխակ 43, Լուսին 71, Ազատ 1213, Նեմրուտ 62. 20, Արփի 38, Մարգարիտ 51. 20, Հովիկ 15. 20, Հրատ 9, Ֆուճուար 47 դրտ.։

**) Նուիրատուութեան սոյն ցանկի առաջին մասը մեզ չի հասած։*